Ազգ
Azg
armenian daily
25 ՆՈՅԵՄԲԵՐ 1995, ՇԱԲԱԹ # 227 (981)

Հարավսլավիան առանց պատժամիջոցների

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓԱՍՍ: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միաձայն որոշել է դադարեցնել տնտեսական պատժամիջոցների կիրառումը Հարավսլավական Սերբիա եւ Չեռնոգորիա, կամ ինչպես արեւմուտքում են ասում, Մոնտենեգրո հանրապետությունների դեմ: Բելգրադի դեմ ՄԱԿ-ի պատժամիջոցները կիրառվեցին երեք տարի առաջ: ՄԱԿ-ը գտնում էր, որ Սերբիան է հրահրում պատերազմը նախկին Հարավսլավիայում: Համաձայն նոյեմբերի 22-ի ուշ երեկոյան ընդունված որոշման, եթե արձանագրվեն պայմանագրի լուրջ խախտումներ, ԱԽ-ն իրավունք է վերապահում հինգ օրվա ընթացքում վերսկսել պատժամիջոցների կիրառումը:

Օրեր Օհայոյում ստորագրված պայմանագրի համաձայն, Բոսնիայում պետք է տեղակայվի ՆԱՏՕ-ի 60 հազար զինվորական, այդ թվում 20 հազարը ԱՄՆ-ից: Դանիան, Շվեդիան, Նորվեգիան, Ֆինլանդիան ընդհանուր առմամբ Բոսնիա են գործուղելու մոտ 4500 զինծառայող, որոնք ենթարկվելու են ամերիկյան հրամանատարությանը: Հյուսիսային երկրների պաշտպանության գործողությունների հետագա կարգավորման նպատակով նոյեմբերի 23-ին Կոպենհագեն է ժամանել ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Ուիլյամ Փերին, որը հայտարարել է, թե ՆԱՏՕ-ն չի հանդուրժի որեւէ հարձակում իր ստորաբաժանումների վրա: «Ամեն ոք, ով հարձակում իրականացնի, անմիջապես արժանի պատասխան կստանա: Մենք չենք ակնկալում, որ մեզ հակադրվելու է ինչ-որ կանոնավոր բանակ, սակայն մեր երկրները գործուղում են տարածաշրջան լավ մարզված եւ պրոֆեսիոնալ զինվորականներ», ասաց Փերին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետը Օդեսայում օծելու է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Նոյեմբերի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը մեկնեց Օդեսա կատարելու օծումը նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու, հայտնում է Մայր Աթոռի մամլո դիվանը: Վեհափառ Հայրապետին ընկերակցում են Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը, գավազանակիր Արտակ աբեղա Տիգրանյանը, Մայր Աթոռի միաբաններ: «Զվարթնոց» օդանավակայանում Նորին Սրբությանը ճանապարհեցին Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Յու. Բախշյանը, կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լ. Մուջյանը, Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոզապալյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Մայր Աթոռի պաշտոնեության ներկայացուցիչներ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Բաբկեն Արարքցյանը կմեկնի Անկարա

Ինչպես հաղորդում է Թուրքիայի «Ժամանակ» օրաթերթը, Սեւծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովի նոյեմբերի 27-28-ը կայանալիք լիագումար նիստերին մասնակցելու համար առաջիկա կիրակի Անկարա կժամանի ՀՀ Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը: Ի պաշտոնե Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը նախագահելու է վեհաժողովի լիագումար նիստերում: Ընդհանրապես թուրքական մամուլը մեծ կարեւորություն է տալիս Անկարայում կայանալիք վեհաժողովին: Դատելով հրատարակումների ընդհանուր բովանդակությունից, առանձնակի նշանակություն է տրվում եւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահի նախատեսվող երկկողմ հանդիպումներին: Հայաստանի պատվիրակության կազմում են ԱԺ փոխնախագահ Կարապետ Ռուբինյանը, ԱԺ պետական-իրավական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Եգորյանը, «Շամիրամ» կուսակցության խորհրդարանական խմբակցության նախագահ Ջուլիետա Կաժոյանը, պաշտոնատար այլ անձինք:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Գ. Բարամիձե. Հայ-վրացական ազգային որեւէ խնդիր այս փուլում չկա

ՏԻԳՐԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Երեկ Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան, Սամցխե-Ջավախեթիում նոր նշանակված նահանգապետ Գրիգոլ Բարամիձեն Երեւանում հանդիպումներ ունեցավ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանի, արտգործնախարար Վահան Փափազյանի, ԱՊՀ, Եվրամիության եւ միջազգային տնտեսական կազմակերպությունների գծով նախարար Դավիթ Շահնազարյանի հետ: Դեսպանը ներկայացրել է Վրաստանի ներքին կացությունը, խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների արդյունքները, քննարկելով նաեւ տարածաշրջանային համագործակցության զարգացման, երկու պետությունների համագործակցության, եւ Երեւանում Վրաստանի դեսպանության աշխատանքների կազմակերպմանն առնչվող հարցեր: 35-ամյա Գրիգոլ Բարամիձեն մասնագիտությամբ բանասեր-արեւելագետ է, հայագիտության գծով: Սովորել է ասպիրանտուրայում, այնուհետեւ 1982-90 թթ-ին զբաղվել է կոմերիտական աշխատանքով, 1990-92 թթ. Վրաստանի երիտասարդական միության նախագահ, 1994 թվից նաեւ Վրաստանի նախագահի պետական խորհրդական էր: 27 գիտական աշխատությունների հեղինակ է: Տիրապետում է հայերեն, ռուսերեն, գերմաներեն եւ անգլերեն լեզուներին: Վրաստանի հայագետների միության նախագահի տեղակալ է, ամուսնացած է, ունի որդի: Պարգեւատրվել է Սպիտակի երկրաշարժի հետեւանքների վերացման աշխատանքներին մասնակցելու համար, ստացել է պետական պարգեւներ:

Տես # էջ 3

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Բյուջեի ծախսերը գերազանցում են եկամուտներին

Պատգամավորները վաղաժամ հոգնեցին

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Նոյեմբերի 24-ին ԱԺ-ում կայացավ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստ: Օրակարգում ընդգրկված էին ՀՀ 1996 թ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտների ձեւավորման եւ հարկային քաղաքականության իրագործման հարցեր: Հրավիրված էին եւ ներկա ՀՀ ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանը, հարկային տեսչության պետ Պավել Սաֆարյանը եւ այլ պաշտոնական անձինք:

Ի տարբերություն կառավարության, ԱԺ պատգամավորները շատ քիչ հետաքրքրություն էին ցուցաբերել քննարկվող հարցերի նկատմամբ: Ներկա էին ընդամենը հինգ պատգամավոր, որոնցից մեկը նիստը նախագահող, ԱԺ համապատասխան հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանն էր: Եւ բնական էր կառավարության ներկայացուցիչների անհույս դժգոհությունը: Ստացվում է այնպես, որ կառավարությունը պատրաստված է եւ շահագրգիռ այս քննարկումների հանդեպ, մինչդեռ մյուս կողմը՝ Ազգային ժողովը, ուղղակիորեն անտարբեր է: ԱԺ պատգամավորների այսօրինակ «հոգնածությունը» խիստ վաղաժամ դրսեւորվեց:

Կարճատեւ քննարկման ժամանակ տեղեկացվեց, որ 1996 թ. բյուջեի կախվածությունը հումանիտար օգնությունից նվազելու է: 1995 թ. բյուջեի եկամուտների 25 տոկոսը հարկերից են կազմավորվել: Իսկ տեղական արտադրության ակցիզային հարկը կազմում է 50 տոկոս: 1995 թ. համեմատ հաջորդ տարի հողից գանձվող հարկը նվազելու է, քանի որ խաղողի այգիներ ունեցող գյուղացիները, ինչպես տեղեկացրել ենք, 1996 թ. հողի հարկ են վճարելու 50 տոկոսով: Խոսք եղավ նաեւ այն մասին, որ գյուղացիներն ընդհանրապես 1995 թ. հողի հարկը դեռ չեն վճարել, մեծ մասամբ նրանք ուշացնում են վճարումները: Հողի հարկ չվճարելու համար Արտաշատի շրջանում գյուղացիներից մի քանիսը զրկվել են հողից՝ նրանցից հողը ետ է վերցվել: Ըստ ներկա պատգամավորներից մեկի, հարկ չվճարելու համար գյուղացուն հողից զրկելը իրավական հիմք չունի: 1996 թ. նախատեսվում է մեծացնել ավելացված արժեքի հարկը հանրապետություն ներմուծվող ապրանքների վրա: Պրն Բարխուդարյանը նշեց, որ ներմուծողները չգիտեն իրենց իրավունքներն ու պարտականությունները, իսկ մաքսային կետերում ավելորդ քաշքշուկից խուսափելու համար ֆինանսների նախարարն առաջարկեց բոլոր մաքսային կետերում փակցնել համապատասխան որոշումները: Բյուջեի նախագծում ամրագրված է, որ «ՀՀ 1995 թ. պետական բյուջեի ինն ամսվա կատարման արդյունքները հիմք են տալիս կանխատեսել, որ պետբյուջեի եկամուտների մուտքերը տարեկան արդյունքներով կկազմեն 87.7 մլրդ դրամ, ծախսերը՝ 116.2 մլրդ դրամ, իսկ բյուջեի դեֆիցիտը՝ 28.5 մլրդ դրամ: Պետական բյուջեի եկամուտների տարեկան պլանը կկատարվի 86.7 տոկոսով կամ պլանային ցուցանիշների դիմաց չի ստացվի շուրջ 14.4 մլրդ դրամ եկամուտ: Բյուջեի եկամուտների սպասվելիք մուտքերը հարկային եկամուտներից կկազմեն 50.875 մլրդ դրամ, ոչ հարկային եկամուտներից՝ 17.44 մլրդ դրամ եւ գրանտներից՝ 19 մլրդ դրամ կամ պլանները կկատարվեն համապատասխանաբար՝ 90 տոկոսով, 93 տոկոսով եւ 74 տոկոսով»:

Այնուհետեւ խոսք եղավ թաքցված եկամուտների եւ դրանց հայտնաբերման, տնտեսության մեջ պետական եւ մասնավոր սեկտորների հարաբերակցության, հարկատուների իրավունքների ընդլայնման, հարկային համակարգում մասնագիտական ստորաբաժանումների ստեղծման մասին: (Օգտվելով ֆինանսների նախարարի եւ հարկային տեսչության պետի ներկայությունից, ընդմիջմանը հարցազրույցի հրավիրեցինք նրանց: «Ազգի» առաջիկա համարներում կներկայացնենք այդ հարցազրույցները): Երեկվա քննարկումը նախավերջինն էր, վերջում կքննարկվի ՀՀ դրամավարկային քաղաքականությունը: Սակայն դատելով այս քննարկումներին ԱԺ պատգամավորների թվի անընդհատ նվազումից, պետք է ենթադրել, որ հաջորդ՝ վերջին քննարկումը կվերածվի... մամլո ասուլիսի: ■

ՓԱՐԻԶ

Սեւամորթները մետրոյում կողոպտել են հայ դիվանագետի

Ֆրանսիայում ՀՀ դեսպանության մամուլի ծառայությունը տեղի հայկական թերթերում տարածել է հաղորդագրություն այն մասին, թե նոյեմբերի 20-ի ուշ երեկոյան Փարիզի մետրոյի «Ֆրանկլին Ռուզվելտ» կայարանում մի խումբ անծանոթների կողմից հարձակման են ենթարկվել 2 հայ դիվանագետներ՝ Էդվարդ Փանոյանը եւ Սամվել Լալայանը, կայարանի անցումը սանդղակի վրա արհեստական հրմշտոցի ժամանակ հարձակվող սեւամորթները դիվանագետներից մեկի գրպանից թալանել են նրա ողջ գումարը՝ 1105 դոլլար, 250 ֆրանկ եւ ձեռքի թանկարժեք ժամացույցը: Բարեբախտաբար, հայ դիվանագետները, որոնք ֆրանսիական կողմի հրավերով չորսշաբաթյա դիվանագիտական վերապատրաստություն անցնելու համար էին ժամանել Փարիզ, մարմնական ոչ մի վնասվածք չեն ստացել: Ֆրանսիայում ՀՀ դեսպանատունը միջադեպի մասին տեղյակ է պահել Ֆրանսիայի արտգործնախարարությանը:

Վերջին շարք մտավ Գյումուշի ՀԷԿ-ը

Ավարտվեցին տարերային աղետից վթարված Գյումուշի հիդրոէլեկտրակայանի վերականգնման 6 ամիս տեւած աշխատանքները: Ինչպես Նոյյան Տապան գործակալությանը հայտնեցին ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից, նոյեմբերի 24-ին վերագործարկվեց եւ սկսեց էլեկտրաէներգիա արտադրել կայանի առաջին ագրեգատը: ՀԷԿ-ի տուրբիններն աշխատում են Մարմարիկ գետի, ինչպես եւ տեղումներից առաջացած ջրերով, քանի որ, կառավարության որոշմամբ, դադարեցված է էներգետիկ նպատակներով ջրի բացթողումը Սեւանից: Շարունակվում են մյուս ագրեգատների վերագործարկման աշխատանքները:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ՀԱՆՐԱՔՎԵ

Իռլանդացիք կարո՞ղ են ամուսնալուծվել

Երեկ ամբողջ օրը Իռլանդիայի 2.7 միլիոն ընտրողները քվեատուփերի մոտ էին: Հանրաքվեի էր դրված այդ երկրի համար կարեւորագույն մի հարց՝ անհամապատասխանության եւ կամ այլ պատճառներով խզված կարո՞ղ են ապահարզան տալ, թե՞ ոչ, կամ, ավելի ճիշտ, իռլանդացիք իրավունք ունե՞ն կրկին ամուսնանալու, քանի որ երկրում փաստական ամուսնալուծվածների թիվը բավական մեծ է: Ըստ երեւույթին, պայքարը գնում է կաթոլիկ եկեղեցու եւ քաղաքական կուսակցությունների միջեւ, որոնցից առաջինը չի ուզում զիջել ամուսնական իրավունքի վրա իր ունեցած իշխանությունը Եվրոպայի իր վերջին միջնաբերդում՝ Իռլանդիայում, մինչդեռ կուսակցությունների մեծ մասը պայքարում է հանուն մարդու քաղաքացիական ազատության: Նույն հարցով նախապես տեղի ունեցած 2 հանրաքվեների արդյունքում հաղթանակ էր տարել կաթոլիկ եկեղեցին, մինչդեռ այս անգամ հարցախույզները՝ ցույց են տալիս կողմերի միջեւ հավասարություն: Հանրաքվեի արդյունքները պարզ կդառնան այսօր կեսօրին:



Ռուսաստանը միջուկային զենք է գնում Ուկրաինայից

30 բալիստիկ հրթիռ, 40 միջուկային կործանիչ եւ շուրջ 300 միջին հեռահարության հրթիռ է գնելու Ռուսաստանը Ուկրաինայից, որպես մեկ մասը մինչեւ 2009թ. իր սպառազինությունների ծրագրի: Այսուհանդերձ, Ուկրաինայի ունեցած պարտքերի դիմաց «գնվելիք» այդ զենքերի գործարքը մտնում է միջուկային զենք ունեցող երկրների «ընտանիքը» չմեծացնելու գերհզոր երկրների ծրագրի մեջ: Գործարքը նպաստավոր է նաեւ Ուկրաինայի համար, որն այդ զենքերի բազմածախս պահպանման կամ դրանց ոչնչացման միջազգային ճնշման երկընտրանքի արանքում, գազամատակարարման դիմաց ունեցած իր պարտքերի ծավալներն է փորձում կրճատել ի դեմս Մոսկվայի: Շահում է նաեւ Ռուսաստանը, որի ստրատեգները լուրջ մտավախություններ ունեն Կիեւի ռազմական հզորացումից:

Մեկօրյա խոշոր գործադուլ Ֆրանսիայում

Նոյեմբերի 24-ին Ֆրանսիայում տեղի է ունեցել մեկօրյա խոշոր գործադուլ: Բանվորների եւ ծառայողների արհմիությունների կոչով ֆրանսիացիները բողոքում են սոցիալական ապահովության համակարգը բարեփոխելու Ալեն Ժյուպեի կառավարության ծրագրի դեմ: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, կազմալուծվել են նավահանգիստները, մետրոյի եւ հասարակական մյուս տրանսպորտի երթեւեկությունը, փակված են փոստն ու հեռագրատունը, պետական եւ որոշ մասնավոր ձեռնարկություններ: Գործադուլ են արել ուսուցիչները, չեն աշխատել թանգարաններն ու մշակույթի մյուս հիմնարկությունները: Փողոցները հանձնվել են ցուցարարների տնօրինությանը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԱԶԳ

տեղական

ՄԱԿ-Ի ԾՐԱԳԻՐ

1996-ը աղքատության վերացման տարի

Մինչեւ 1996թ. վերջը ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի UNDP հայաստանյան ծրագրերի իրականացման համար հատկացվելիք գումարը կկազմի 1,5 մլն. ԱՄՆ դոլլար: Այս մասին Նոյյան տապան գործակալության թղթակցին հայտնել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Արեւելյան Եվրոպայի եւ ԱՊՀ երկրների ռեգիոնալ բյուրոյի թիվ երկու բաժնի պետ Ֆիլիպ Էլգուայեն: Ըստ պրն. Ֆ. Էլգուայեի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գործադիր մարմինը, որն զբաղվում է տարբեր երկրների եւ տարածաշրջանների ֆինանսական միջոցներ հատկացնելով, այս տարվա սեպտեմբերին որոշել է ավելացնել հատկացումների ծավալը Արեւելյան Եվրոպայի եւ ԱՊՀ-ի երկրներին, այդ թվում նաեւ Հայաստանին:

Բացի այդ, Ֆ. Էլգուայեի խոսքերով, Հայաստանը կարող է օգտվել նաեւ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից տրամադրվող այլ միջոցներից: Օրինակ, Բնապահպանության միջազգային ֆոնդը կլիմայի փոփոխությանը վերաբերող հետազոտություններ կատարելու համար Հայաստանին տրամադրել է ավելի քան 360 հազար դոլլար:

Ներկայումս մշակվում է գյուղատնտեսության, արդյունաբերության եւ սոցիալական բնագավառում Հայաստանին տեխնիկական օժանդակություն ցուցաբերելու ծրագիրը: UNDP հովանավորությամբ 1996 թ. եւս աշխատանքներ կկատարվեն մարդկային զարգացման ազգային տարեկան զեկույցը կազմելու ուղղությամբ: Ըստ Ֆ. Էլգուայեի, 1996 թիվը ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը հայտարարել է աղքատության վերացման տարի: Այս խնդրի առնչությամբ Հայաստանում նույնպես կկատարվեն համապատասխան ուսումնասիրություններ: Պրն. Ֆ. Էլգուայեն տեղեկացրեց նաեւ, որ որպես ՄԱԿ-ի զարգացման հեռանկարային ծրագիր Հայաստանում նախատեսվում է ստեղծել միջազգային կապի եւ լրատվության գլոբալ ցանցերից օգտվելու հնարավորություն: ՆՏ

ԵՐԵՎԱՆ

Երկրապահ կամավորների միության երկրորդ համագումարը

Նոյեմբերի 24-ին ՀՀ կառավարության նիստերի դահլիճում բացվեց Երկրապահ կամավորականների միություն հասարակական կազմակերպության երկրորդ համագումարը, որին մասնակցում էին հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը: Նախագահող կազմում էին պաշտպանության փոխնախարար գնդապետ Աստվածատուր Պետրոսյանը, Երկրապահ կամավորականների միության փոխնախագահ գնդապետ Ալբերտ Բազեյանը, պաշտպանության նախարարի խորհրդական գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանը:

Համագումարը սկսվեց Հայաստանի Հանրապետության եւ Երկրապահ կամավորականների միության հիմներով, որից հետո պաշտպանության նախարար, Երկրապահ կամավորականների միության նախագահ Վազգեն Սարգսյանը հայտարարեց, որ կազմակերպության հիմնն այսուհետեւ կհնչի զինվորական բոլոր շքերթներում, ինչպես նաեւ եկող տարի, երբ տեղի կունենա զինվորական ամենամեծ շքերթը: Պաշտպանության նախարարը հույս հայտնեց, որ հայոց բանակն այդ շքերթին կգնա հաղթանակած: Իր կարճ ելույթում նա նշեց, որ Երկրապահ կամավորականների միության առաջին համագումարը եղել է պայքարական, որից հետո նրա անդամները միահամուռ մեկնել են ռազմաճակատ եւ պատվով կատարել իրենց գործը: Երկրորդ համագումարում պետք է ի մի բերվեն կատարված եւ կատարվելիք աշխատանքները: Վազգեն Սարգսյանը խոստացավ համագումարի նոյեմբերի 25-ի եզրափակիչ նիստում ավելի ծավալուն ելույթ ունենալ:

Համագումարի առաջին նիստում ընտրվեցին խմբագրական, հաշվիչ, մանդատային հանձնաժողովներ, եւ քարտուղարություն: Այնուհետեւ հաշվետու զեկուցմամբ ելույթ ունեցավ Երկրապահ կամավորականների միության փոխնախագահ գնդապետ Ալբերտ Բազեյանը, որը հայտնեց, թե կազմակերպությունն իր գործունեությունը լիարժեքորեն ապահովելու համար առայժմ չունի բավարար պայմաններ, օրինակ շենք, որն իրենց տրվել է վարձակալական հիմունքներով: Նա նշեց, որ միության ֆինանսական միջոցների շուրջ 40 տոկոսն օգտագործվել է զոհված եւ վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին օգնություն ցուցաբերելու նպատակով: Իսկ գումարների մեծ մասը գոյացել է նվիրատվությունների եւ տնտեսական գործունեության շնորհիվ:

Լսվեց նաեւ երկու համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում Երկրապահ կամավորականների միության ծավալած գործունեության մասին վերստուգիչ հանձնաժողովի զեկույցը: Լայն քննարկման արժանացան երկրապահ կամավորականների ընտանիքների սոցիալական ապահովության հարցերը: Ընդգծվեց պետության կարեւորագույն դերն այդ խնդիրներն իրագործելու ճանապարհին:

Զեկուցումների շրջանակում տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեց նաեւ գեներալ-լեյտենանտ Գուրգեն Դալիբալթայանը: Գեներալը շնորհավորեց երկրապահ կամավորականներին երկրորդ համագումարի առիթով եւ կարեւորեց միության դերը, ինչպես մեր օրերում ազատագրական պայքարի, այնպես էլ պետականության կայացման գործում:

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԱՆ

ՅՈՒՆԵՍԿՕ

Առաջին տիկինը կմասնակցի Փարիզյան ֆորումին

Փարիզի «Յառաջ» օրաթերթը տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության նախագահի տիկինը Լյուդմիլա Տեր-Պետրոսյանը նոյեմբերի 27-ին Փարիզում կմասնակցի երեխաների իրավունքների պաշտպանությանը նվիրված միջազգային ֆորումին, որը տեղի կունենա ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում: Ֆորումը կազմակերպվել է Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենի տիկնոջ գլխավորությամբ գործող երեխաների պաշտպան կազմակերպության կողմից, համագործակցությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի եւ ԲԻՍԵ-ի:

Հանդիպման նպատակն է պետությունների եւ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել աշխարհի երեխաների վիճակի, նրանց իրավունքների վրա, ՄԱԿ-ի 1989 թ. պայմանագրության շրջանակներում:

Տիկին Տեր-Պետրոսյանին ընկերակցելու են, ինչպես տեղեկացնում է թերթը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Երեւանի գրասենյակի ներկայացուցիչ Յոհանի Այանկոն եւ 3 հայ փորձագետ կանայք:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

Դատավոր Արմանս Արաբյանը հրաժարական է տալու

Կալիֆորնիայի գերագույն դատարանի դատավոր Արմանս Արաբյանը «Լոս Անջելես թայմս» օրաթերթում հայտարարել է, որ առաջիկա փետրվարին հրաժարվելու է իր պաշտոնից, ամբողջովին նվիրվելու համար Հայաստանի դատական համակարգի բարելավման աշխատանքներին օժանդակելուն: Ներկայիս 60 տարեկան հայազգի դատավորը 1990 թ.-ին էր նշանակվել այդ պաշտոնում, Կալիֆորնիայի նախկին կառավարիչ Ջորջ Դուքմեջյանի կողմից: Արմանս Արաբյանը անցյալ ամիս եղել է Հայաստանում եւ վերադարձին, ինչպես իր հերթին հաղորդում է «Նոր օր» եռօրյան, ՀԲԸ Միության Ալեք Մանուկյան կենտրոնում ելույթ էր ունեցել եւ դրվատել Հայաստանում ժողովրդավարական գործընթացը:

Ռուսաստանի Դաշնության հայ համայնքների ներկայացուցիչների հավաք «Հայաստան» հիմնադրամում

Նոյեմբերի 24-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության գրասենյակում տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության հայկական համայնքների ներկայացուցիչների եւ Հիմնադրամի գործադիր վարչության հանդիպումը:

Սա Հիմնադրամի կազմակերպած ՌԴ հայկական համայնքների ներկայացուցիչների եռօրյա հավաքի առաջին միջոցառումն էր, որի նպատակը Հիմնադրամի գործունեությանը, ծրագրերին եւ կատարած գործերին ծանոթացնելն է:

«Հիմնադրամը ստեղծվել է Հայաստանի եւ Արցախի զարգացման գործին ողջ հայությանը մասնակից դարձնելու համար, եւ անհրաժեշտ է, որ այդ գործին անմասն չմնան նաեւ Ռուսաստանում բնակվող մեր հայրենակիցները», բացելով հավաքն ասաց գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանը:

Հավաքի ընթացքում քննարկվեցին տեղերում մասնաճյուղերի ստեղծմանն ու տեղեկատվության լիարժեք փոխանակմանն առնչվող հարցեր:

Մասնակիցները ներկայացրեցին իրենց համայնքները, առաջ քաշեցին համայնքներում առաջացած հրատապ խնդիրներ, որոնց մեծ մասը կարող է լուծվել միայն համահայկական կառույցի ջանքերով:

Հաջորդ երկու օրերին հավաքի մասնակիցները կմեկնեն աղետի գոտի եւ Զանգեզուր:

ՀՐԱՏԱՊ

Նոր անձնագրերի բաշխման համար հավելյալ ժամանակ է հարկավոր



Հայաստանի քաղաքացիներին նոր անձնագրերի բաշխումը ՀՀ կառավարության 1992 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ նախատեսված էր սկսել 1993 թվականի հունվարի 1-ից եւ ավարտել 1995-ին: Սակայն, ինչպես Արմենպրեսի թղթակցին տեղեկացրեց ՆԳ նախարարության անձնագրային եւ վիզաների վարչության պետի տեղակալ Վահե Հարությունյանը, համապատասխան սարքավորումների ձեռքբերման հետ կապված դժվարությունների, դրանց աշխատանքի համար հոսանքի անկանոն մատակարարման, ցածր հաճախականության եւ այլ օբյեկտիվ պատճառներով անձնագրերի բաշխումը սկսվեց միայն 1994-ին: «Կարծում եմ, նշեց պրն Հարությունյանը, որ կառավարությունը պետք է վերանայի այդ որոշումը, քանի որ մինչեւ սահմանված ժամկետը 1995 թվականի վերջը, հնարավոր չի լինի ավարտել աշխատանքները»: Հանրապետության շատ եւ մայրաքաղաքի բոլոր շրջաններում տեղադրված են համակարգիչներ, եւ ցանկացած քաղաքացի կարող է դիմել իր շրջանի անձնագրային բաժին ու 10 օրվա ընթացքում փոխել անձնագիրը: Սակայն հանրապետության հեռավոր շրջաններում Մեղրիում, Նոյեմբերյանում եւ այլ սահմանամերձ գոտիներում դեռեւս անհրաժեշտ համակարգիչներ չկան, ինչը պայմանավորված է տեղական իշխանությունների եւ ՆԳ նախարարության տեղի մարմինների հապաղմամբ: ՆԳ եւ կապի նախարարությունների հետ կնքված է պայմանագիր տեղերում համակարգիչների տեղադրումից հետո, վարչական կենտրոնի հետ նրանց կապը ապահովելու համար: Շրջաններում անձնագրերի բաշխման գործընթացը բնականաբար նույն արագությամբ չի ընթանում, ինչ մայրաքաղաքում, քանի որ հատկապես այս փուլում գյուղատնտեսական աշխատանքները թույլ չեն տալիս մարդկանց այդ հարցերով զբաղվել: Ըստ Վ. Հարությունյանի, եթե մեկ տարի էլ երկարաձգվի սահմանված ժամկետը, ապա մյուս տարի Հայաստանի քաղաքացիների եթե ոչ 100, ապա գոնե 90 տոկոսը ստացած կլինի նոր անձնագրեր:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԱՍՈՒԼԻՍ

Առողջապահության նախարարությունը վստահեցնում է, որ կհստակեցվեն վճարովի եւ անվճար բուժսպասարկման սահմանները

Երեկ, ՀՀ առողջապահության նախարարությունում հրավիրված մամլո ասուլիսը նպատակ ուներ լրագրողներին ավելի հանգամանորեն ներկայացնել նախարարությունում մշակված բժշկական օգնության եւ սպասարկման մասին օրենքի նախագիծը: Այն առաջին անգամ ներկայացվել էր Ազգային ժողովի՝ նոյեմբերի 16-ի նիստում եւ առիթ տվել լրագրողների զանազան մեկնաբանությունների:

Բարեփոխումների ներդրման եւ զարգացման գծով փոխնախարար Ավետ Գրիգորյանը մանրամասն ներկայացրեց նախագծի բոլոր գլուխները: Նոր օրենքը կառուցվածքային փոփոխությունների շնորհիվ հնարավորություն կտա ոչ միայն «անվճար» բուժսպասարկումը փոխարինել ավելի իրական մեխանիզմով, այլեւ չեզոքացնել նախկինում գոյություն ունեցող վարչահրամայական համակարգը, որը շեղում էր առավել արդյունավետ տնտեսական մեխանիզմները: Այս մասին խիստ մատչելի դասախոսություն կարդաց առողջապահության նախարար Արա Բաբլոյանը: Նա հիշեցրեց, որ նախկին [illegible] գործառույթները հանձնելով կենտրոնական հիվանդանոցների գլխավոր բժիշկներին հասցրել էին նրան, որ առաջին օղակի՝ բժշկասանիտարական հիմնարկները հայտնվել էին զուտ [illegible] զբաղվողների կարգավիճակում: Իսկ բազմապրոֆիլ հիվանդանոցներն ու բժշկական մասնագիտական կենտրոնները (այն է՝ ինստիտուտները), խիստ ծանրաբեռնված էին: Նոր կառուցվածքը հնարավորություն կտա հիմնարկներին գործել ըստ հիվանդությունների բարդության դասակարգման:

Օրենքի անհրաժեշտությունը շեշտվեց նաեւ նրանով, որ այն հնարավորություն կընձեռի բարելավել առողջապահության նախարարության ֆինանսավորումը: 95-96 թթ. առողջապահությանն է հատկացվել ՀՀ պետբյուջեի մոտ 10 տոկոսը (9,6-9,7): Սակայն համակարգի սպասարկման ներքին սահմանն ապահովելու համար անհրաժեշտ է 5 անգամ ավելին: Օրենքի ընդունումը թույլ կտա ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ ունենալ:

Օրենքն անդրադառնում է բժշկական սպասարկում ստացող քաղաքացու իրավունքներին, ինչպես եւ բուժօգնությունն իրականացնողների իրավունքներին ու պարտականություններին: Շեշտվեց, որ սոցիալական տարբեր խմբեր (անապահով խավ, հաշմանդամներ եւ անչափահասներ մինչեւ 18 տարեկանները) կօգտվեն անվճար սպասարկման իրավունքից: Անվճար բուժօգնություն կապահովվի նաեւ գերակայող ուղղությունների մեջ ընդգրկված (նյարդային, հոգեկան հիվանդություններ, շաքարախտ, տուբերկուլյոզ, համաճարակային հիվանդություններ, ծննդօգնություն եւ այլն) հիվանդությունների դեպքում:

Անդրադառնալով պարտադիր բժշկական ապահովագրությանը, պրն Գրիգորյանը իր դրական վերաբերմունքն արտահայտեց, սակայն զարգացման այս փուլում դրա ներմուծումը համարեց ժամանակավրեպ: Թերեւս մարդիկ պատրաստակամություն ցուցաբերեն նոր հարկ վճարել անվճար բուժօգնություն ստանալու համար: Բայց նույնիսկ նոր կառուցվածքների անցնելու դեպքում երկար ժամանակ կպահանջվի թեյավճարների հոգեբանությունը հաղթահարելու համար:

Ա. Գ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
[illegible]
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
ֆաքս 562941, AT&T (3742) 151065
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԴԻԼԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տառաձեւերը ԴԱՆԵԼ ԴԱԼԼԱՔԵԱՆԻ
Apple Macintosh
համակարգչային սարքաւորումը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՀԱՅԿԱԶՈՒՄՆԵՐ

ԱԳՆ-ում քննարկել են Անդրկովկասի հիմնախնդիրները

ՌԴ արտաքին գործերի նախարարությունում կայացած աշխատանքային հանդիպումը նվիրված էր «Անդրկովկասի հիմնախնդիրների վերաբերյալ Ռուսաստանի ընդհանուր դիրքորոշման» քննարկմանը։ Նոյեմբերի 24-ին այս մասին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել է Ռուսաստանի արտգործնախարարության լրատվության եւ մամուլի դեպարտամենտի տնօրեն Գրիգորի Կարասինը։ Հանդիպմանը մասնակցել են արտաքին քաղաքական գերատեսչության, պաշտպանության նախարարության, անվտանգության համապետական, արտաքին հետախուզական եւ սահմանապահ ծառայությունների ղեկավարները։ Խորհրդակցության ընթացքում, ասել է արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչը, կայացել է «կարծիքների արդյունավետ փոխանակություն՝ Ռուսաստանի միջնորդական գործունեության համատեքստում միջգերատեսչական ջանքերի կոորդինացման շուրջ»։ Ռուսական կողմը, ինչպես հայտնի է, հանդես է գալիս մի շարք տարածաշրջանային՝ այդ թվում Լեռնային Ղարաբաղի, վրաց-աբխազական եւ վրաց-օսական հակամարտությունների կարգավորման գործում։

ԱՐՄԵՆՊՐԵՍ

■ ***Երեւանում բացվում է «Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության գրասենյակը։*** *Նոյեմբերի 25-ին տեղի կունենա «Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության երեւանյան գրասենյակի (Մաշտոցի պողոտա 39/2. Թամանյանի արձանի մոտ) բացման արարողությունը։ Այսուհետեւ այս գրասենյակի միջոցով ավիաընկերությունն ինքը կզբաղվի ավիատոմսերի վաճառքով։ «Հայկական ավիաուղիները» չվերթներ է կատարում բոլոր, այդ թվում նաեւ Երեւան-Մոսկվա-եվրոպական մայրցամաքի ցանկացած երկիր, Երեւան-Մոսկվա-Նյու Յորք ուղղություններով։ Վերջին չվերթն իրականացվում է «Բոինգ 767» ավիալայներով։*

ՆՏ

ՇՐՋԱՆ

«Հայ-վրացական ազգային որեւէ խնդիր այս փուլում չկա»

Սկիզբը էջ 1

Օգտագործելով այս կարճատեւ այցը (դեսպանը վերադառնալու էր Թբիլիսի մասնակցելու Էդուարդ Շեւարդնաձեի նախագահական երդման արարողությանը), պրն Բարամիձեն այնուամենայնիվ մի փոքրիկ հանդիպում ունեցավ «Ազգ» օրաթերթի, «Արմենպրեսի», BBC-ի եւ «Սնարքի» թղթակիցների հետ։ Նա խոստացավ մեկ շաբաթ անց կրկին վերադառնալ Երեւան։ Նշելով, որ դեսպանի եւ նահանգապետի համատեղումը աննախադեպ երեւույթ է, պրն Բարամիձեն նկատեց, թե իր համար շատ դժվար է լինել եւ Հայաստանում եւ Ջավախքում։ Եւ այս փուլում ինքը պետք է լուծի երկկողմ տնտեսական, քաղաքական եւ մշակութային բոլոր հարցերը։ Նրա կարծիքով, այս փուլում դա միանգամայն արդարացված է։

Երեւանում արդեն իսկ քննարկվել է Նինոծմինդայում ազատ տնտեսական գոտի բացելու հարցը։ Ախալցխայում նոյեմբերի 25-ին պետք է բացվի Թուրքիայի հետ սահմանի մաքսատունը, որն ավելի մեծ կլինի, քան Աջարիայի համանման մաքսատունը։

Այդ ազատ-գոտիները թե Հայաստանին եւ թե Վրաստանին կտան լուրջ տնտեսական օգուտ։ Դեսպան Բարամիձեն տեղեկացրեց նաեւ, թե համատեղ ուժերով պետք է վերականգնվի Գյումրի-Նինոծմինդա-Ախալքալաք-Թբիլիսի ուղին։

Ընդհանրապես, խոսելով հայ-վրացական հարաբերությունների մասին, դեսպանը դրանք դասեց միջինից բարձր։ «Հայ-վրացական ազգային որեւէ խնդիր այս փուլում չկա», հայտարարեց Վրաստանի դեսպանը։ Դա հավաստեց նաեւ հանդիպմանը ներկա, պետական խորհրդական Սամվել Աղիկյանը (Շառլ Ազնավուր մշակութային բարեգործական միության նախագահ), որը հիշեցրեց, թե միայն Զվիադ Գամսախուրդիայի օրոք էին լինում նման խնդիրներ։

Հայ համայնքը, նշեց նա, զոհ է այն դրական քայլերից, որ արվում են Վրաստանի եւ Հայաստանի կողմից։

●

Պատասխանելով մեր այն հարցին, թե ինչպես է գնահատում «Ջավախք» ժողովրդական շարժումը, դեսպանը նշեց, թե ինքը չի հրաժարվում հանդիպումներից, եւ հաճախ է զրույցներ ունենում Շարժման անդամների հետ։ Գիգա Բարամիձեն միեւնույն ժամանակ հայտնեց, թե որոշ բաների հետ ինքը համաձայն չէ։ Բայց ինչ վերաբերում է Վրաստանի տարածքային ամբողջականությանը, երկրի կառուցվածքին, նախագահական ինստիտուտին, ապա այս հարցերում երկու կարծիք լինել չի կարող։

Մյուս բոլոր հարցերում ինքը պատրաստ է համագործակցել բոլորի հետ, բայց միայն Վրաստանի շահերի շրջանակներում։ Վրաստանի դեսպանը խոստովանեց նաեւ, որ կան ուժեր, որոնց Վրաստանի եւ մասնավորապես Սամցխե-Ջավախքի կայունությունը չի գոհացնում։

Դեսպանն անդրադարձավ նաեւ հայաբնակ շրջաններում ինքնավարություն մտցնելու հարցին։ Նրա կարծիքով, ամեն ինչ արդեն իսկ տրվել է տեղական իշխանություններին, եւ կադրային հարցը, եւ առեւտուրը, եւ սոցիալ-կենցաղային հարցերը։ «Դրանից ավելի էլ ի՞նչ արտոնություններ տանք», եզրափակեց նա, հույս հայտնելով, որ մոտ ապագայում ավելի ծավալուն զրույց կունենա հայ լրագրողների հետ։

ՀՀ օդային սահմաններից ռազմական օդանավեր չեն թռել Չեչնիայի ուղղությամբ

Նոյեմբերի 22-ին «Նոյյան տապան» գործակալությունը հաղորդել էր «Հայաստանում ռուսական ինքնաթիռներ չկան» վերտառությամբ լուր, որի մեջ սողոսկել է անճշտություն։ «Ազգը» այդ լուրը չի տպագրել, սակայն ընդառաջելով գործակալությանը, ներկայացնում ենք խմբագրված տարբերակը։

«Նոյեմբերի 21-ին ադրբեջանական «Թուրան» լրատվական գործակալությունը, վկայակոչելով չեչենական իրազեկ աղբյուրները, հաղորդել որ Ռոշնիչոյի ռմբակոծությունը իրագործել են Ռուսաստանի 8 ռազմական ինքնաթիռներ, որոնք օդ են բարձրացել Հայաստանում գտնվող Ռուսաստանի ռազմաօդային բազայից», հայտնել է «Ազատություն» ռադիոկայանը։ Ըստ «Թուրան» գործակալության, այդ գործողությունը կատարվել է Ռուսաստանի ռազմաօդային ուժերի հրամանատար, գեներալ-գնդապետ Դեյնեկինի հրահանգով։ Սակայն, Ռուսաստանի ռազմաօդային ուժերի մամուլի ծառայության հաղորդման համաձայն, Հայաստանում ներկայումս չկան Ռուսաստանի ռազմական ինքնաթիռներ։ ««Թուրանի» տեղեկատվությունը հերյուրանք է», հայտարարել է մամուլի ծառայության ղեկավարը։

Ըստ Ռուսաստանի պաշտպանության մամուլի ծառայության ղեկավար Սերգեյ Ուշակովի, ներկայումս Ռոշնիչոյի ռմբակոծությանը վերաբերող քրեական գործը Գրոզնու կայազորի դատախազության կողմից փոխանցվում է գլխավոր ռազմական դատախազության քննիչներին։ «Դեռ վաղ է որեւէ եզրակացություն անել այն մասին, թե ով է իրագործել չեչենական գյուղի ռմբակոծությունը», ասել է Ս. Ուշակովը։ «Նույն հաջողությամբ կարելի է ասել, որ այդ ինքնաթիռները թռիչք են կատարել Ադրբեջանի տարածքից», «Նոյյան տապան» գործակալությանը հայտարարեց ՀՀ պաշտպանության նախարարության լրատվական վարչության պետի տեղակալ կապիտան Հայկ Նահապետյանը։

«Թուրան» գործակալության տարածած հերյուրանքի կապակցությամբ նա հաղորդեց պաշտպանության նախարարության հետեւյալ պաշտոնական պատասխանը. «ՀՀ օդային սահմաններից ռազմական օդանավեր չեն թռել Չեչնիայի ուղղությամբ, հետեւաբար չէին կարող ռմբակոծել Չեչնիայի բնակավայրերը»։

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

Երկու հայերի սպանողը ցմահ բանտարկության դատապարտվեց

ԵՐԵՎԱՆ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓԱՍՏ։ Իսահակ Բենլիօղլին, որ Գումքափուի «Դեսփինա» խորտկարանում սպանել էր Վահան Գարբալօղլուն եւ Նշան Սերաքյանին («Ազգ»-ը ժամանակին հանգամանորեն անդրադարձել է այդ դեպքին), երկար ժամանակ դատարանում փորձում էր արդարացնել իր արարքը։ Նա, որ բանտ մտնելուց հետո մահմեդականություն էր ընդունել եւ թլպատվել էր, չկարողացավ ազդել դատական մարմինների վրա։ Դատարանը մահապատիժ պահանջեց կանխամտածված կերպով մեկից ավելի մարդկանց սպանելու մեղադրանքով։ Բայց հաշվի առնելով, որ վերջին շրջանում Թուրքիայում մահապատիժներ չեն իրականացվում, եւ նկատի ունենալով Իսահակ Բենլիօղլու բանտում ունեցած դրական վարքը, դատարանը մահապատիժը փոխարինեց ցմահ բանտարկությամբ։ Բենլիօղլին հայտնեց, որ [illegible] է զղջացել։ Նա վատառողջ է, եւ փաստաբանի խոսքերով, իր [illegible] կյանքը չի բավականացնի՝ փակելու համար նույնիսկ ամենակարճ բանտարկության պատիժը։ Ներկայիս օրենքներով ենթադրվում է, որ նա 12 ու կես տարուց հետո կարող է ազատ արձակվել։

Վանա լճի հրեշը՝ ծաղրի նյութ

ԵՐԵՎԱՆ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓԱՍՏ։ Վանա լճի հրեշի պատմությունը երգիծանքի նյութ է դարձել թուրքական մամուլում։ Հեգնական նյութերը սկսեցին հրապարակվել այն պահից, երբ ձեւավորվեց հրեշի գոյության հարցը քննող խորհրդարանական հանձնաժողով։ Վանա լճի հրեշին զուգահեռ այժմ խոսվում է նաեւ ծովաձիու մասին։ Ամենածիծաղաշարժը սակայն այն է, որ վանեցիները այժմ սկսել են անուն որոնել երեւակայական հրեշի մասին։ Ինչ անուններ ասես, որ հրապարակ չեն գալիս. «Վանքոն եղբայրներ», «Վանկըր», «Վանքուս», «Նամբըր-Վան», «Փարա-Վան» եւ այլն։ Դրանցից բացի ոմանք էլ առաջարկում են «Բեսամի» անունը, որը Վանի կուսակալի տեղակալի անունն է։ Գործը հասել է նրան, որ բազմաթիվ ընթերցողներ ֆաքսով կամ հեռախոսազանգով անուններ են առաջարկում «Հյուրրիյեթ» թերթին եւ այլ պարբերականներին։ Անունից բացի առաջարկվում է հրեշի համար էմբլեմ պատրաստել։

ԵՐԿՐԱՊԱՀՆԵՐ

Զինվորն անցել է խաղաղ աշխատանքի

Ռազմիկ Թեւոնյանը եւ Մանվել Ղազարյանը, մեկը Երասխավանի, մյուսը՝ Վեդու գինու գործարանի տնօրեններն են։ Մարդիկ, որոնք, առանց դույզն ինչ չափազանցության, հայտնի են Արարատի շրջանում որպես բարերարներ։ Առանց սպասելու «վերեւների» կարգադրությանն ու հրահանգին կամ «ներքեւների» խնդրանքին՝ նրանք օգնության ձեռք են մեկնում զոհվածների ընտանիքներին, ազատամարտիկներին, մանկական հիմնարկներին, զորամասերին։ Նրանց մեջ միաձույլ են ազգանվեր հայը, անձնուրաց զինվորը, արտադրության գործարար եւ ձեռներեց կազմակերպիչը։ Այսօրվա բարդ տնտեսական հարաբերություններում նրանց տնօրինած ձեռնարկությունները ոչ միայն չեն վերածվել եւս մի ավերակի, փակման վտանգի առջեւ կանգնած գործարանների, ոչ միայն պարտք չեն պետությանն ու ազգաբնակչությանը, այլեւ առաջընթաց քայլեր են արել, ընդլայնել արտադրությունը, նոր ու հետաքրքիր լուծումներ գտել։ Երասխավանի գինեգործարանը շուկա է հանել «Տարոն» անխառն գինին, Վեդու գինեգործարանը՝ «50-50» մաքուր օղին։ Եւ այդ ամենը՝ նախ եւ առաջ տնօրենների անհատական նախաձեռնության շնորհիվ։

Երասխավանում առաջին հայացքից ոչինչ չի մատնում պատերազմական օրերի մասին։ Սահմանին դեմ հանդիման գինեգործարանն է, որ բնականոն աշխատում է։ Հետո երեւում է երկաթալարերով պարիսպված սահմանաբաժանը։ Գործարանի շենքի պատերի վրա հրետակոծություններից բացված անցքեր են, քար ու շաղախի մեջ խրված-մնացած պարկուճներ եւ նույնիսկ մի ականի երկաթյա իրան։ Խողովակների մեծ մասը խնամքով ծեփել-փակել են։ Պարսպի տակ վանդակ է՝ մեջն արտասովոր երկու կատուներ։ «Տղաներն են բերել, պատմում է գինեգործարանի տնօրեն Ռազմիկ Թեւոնյանը, վայրի կատուներն են, կամաց-կամաց ընտելացնում, «մերոնքական» ենք դարձնում»։ Հարեւան վանդակի մեջ արծիվ է։ «Տղաներն էին սարում գտել՝ ընկճված եւ թեւերը կախ։ Կկազդուրենք, ազատ կարձակենք», ասում է Ռազմիկը։ Քամին մոտիկ մի տեղից ձիու վրնջյուն է բերում։ Սեւաթույր ձի է։ Ռազմիկը հոգոց է հանում. «Տերն այստեղ է զոհվել, եւ ձին օրվա մեծ մասն անցկացնում է այդ վայրում»։

Գործարանն աշխույժ իրարանցման մեջ է, աշխատակիցները հիմնականում այս հողի ազատությունը կրծքով պաշտպանած այն մարդիկ են, ովքեր այսօր էլ պատրաստ են առաջինը նետվել մարտի դաշտ։ Այստեղ տիրող գրեթե զինվորական կարգապահությունը գործարանը զորամասի է նմանեցնում։ Եւ իրոք, Ռազմիկին այնպես են վերաբերվում, ինչպես զինվորները՝ խստապահանջ, բայց միաժամանակ յուրաքանչյուրի կյանքով ապրող հրամանատարին։ Ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտը, աշխատանքի անցել Շիրազլուի պահածոների գործարանում։ 1991 թ. Երասխավանի գինեգործարանի տնօրենն է։ Առաջին օրերից միացել է Շարժմանը։ Նա Երասխավանի պաշտպանության առաջին գործողությունների կազմակերպիչներից է։ Մասնակցել է Մեղրու պաշտպանությանը, Արցախի եւ Լաչինի համար մղված բազմաթիվ մարտերի։ Իսկ ավելի հաճախ ստիպված է եղել չմիանալ Արցախ մեկնող ջոկատին, որովհետեւ այնպես է ստացվել, որ պարզապես անփոխարինելի է դարձել Երասխավանի համար՝ ե՛ւ խաղաղությունը պահպանելու, ե՛ւ բանակցություններին աջակցելու, ե՛ւ կրակոցների ու մարտերի ժամանակ արագ ու անսխալ կողմնորոշվելու իմաստով։ Հատկանշական է, որ նրա խոսքին հավատում եւ հաշվի են նստում բոլորը՝ մեր զինվորները, հակառակորդը։ Եւ զարմանալի չէ, որ շրջանում տեղակայված՝ առանց բացառության բոլոր զորամասերը, ինչպես Ռազմիկի տեսադաշտում են։ Կռված լինելով այս հողի ամեն մի քար ու թփի համար, օրեր եւ ամիսներ շարունակ սարերում հերթապահություն արած եւ հետախուզության վտանգավոր ճամփաներով բազմիցս անցած Ռազմիկը հրաշալի գիտե զինվորի ու սպայի հոգեբանությունը։ Նա, որ իր գործարանն է զորամասի սկզբունքով կառուցել, բանակային կարգապահության եւ ամեն անակնկալի ու պատահարի միշտ պատրաստ լինելու օրենքները հաստատել իր աշխատակիցների շրջանում, ապրում է նաեւ զորամասերի կյանքով, գիտե նրանցից յուրաքանչյուրի խնդիրներն ու հոգսերը։ Ի դեպ, Ռազմիկը նաեւ Հայաստանի ստենդային ու գնդակային հրաձգության ֆեդերացիայի նախագահն է, եւ ժամանակ ու միջոցներ է գտնում նաեւ այդ գործի համար, որովհետեւ համոզված է, որ հատկապես այդ մարզաձեւը հարկավոր է տարածել եւ զարգացնել մեզանում։

Վեդու գինու գործարանը, կամ, ինչպես ամենքին է հայտնի, «Շամպայնի գինեգործարանը» իր շրջակա տարածքով աչք շոյող բարեկարգ վիճակում է։ Երասխավանից արդեն ծանոթ աշխույժ աշխատանքային եռուզեռն է։ Եւ դարձյալ զինվորական ինչ-որ բան կա ե՛ւ տարածքի բարեկարգման, ե՛ւ աշխատանքի ներքին կազմակերպվածության մեջ։ Տնօրեն Մանվել Ղազարյանը հասակ է առել Վանաշեն գյուղում, Սասունից բռնագաղթված, բայց սասունցու հեթանոսական խառնվածքն ու ազնիվ խենթությունը արյանը պահ տված օջախում։ Պատանի Մանվելի սիրած զբաղմունքը պատմավեպերի ընթերցումն էր, իսկ պատմական Հայաստանի քարտեզն ուղղակի անբաժան էր նրանից։ Եթե հրաշքով հայտնվեր Սասունում, ազատ կկողմնորոշվեր, որովհետեւ անգիր գիտեր տեղանքը։

1988 թվականից ի վեր Մանվելն ապրել է զինվորի կյանքով, եղել է Հայաստանի վտանգված սահմանների պաշտպանների եւ Արցախի ազատամարտիկների թվում։ Ե՛ւ Ռազմիկը, ե՛ւ Մանվելը անդամներն են մի ջոկատի, որի մասին հատուկ պետք է հիշել, որովհետեւ ջոկատի յուրաքանչյուր անդամի կենսագրություն ձուլվել է ընդհանուրին, դարձել մարտական հարուստ եւ բազմափորձ ուղի՝ պսակված փոքրիկ ու մեծ հաղթանակներով։ Դեռ Երասխավանյան առաջին միջադեպերից ու փոխհրաձգությունների ժամանակ իրար գտած մի խումբ տղաներ դարձան զինակիցներ, ապա կենաց եւ մահու խաչուղիներում ծնվեց նրանց տղամարդկային ընկերությամբ շաղախված ամուր ջոկատը՝ փոքրիկ, բայց միշտ մարտունակ, չափազանց կարգապահ ու կուռ։ Դեռ կգա ժամանակը եւ կխոսեն այդ ջոկատի փայլուն հրամանատարի՝ Գրիգոր Գրիգորյանի մասին, որ իրավաբանական իր կրթությունը լրացրել էր ռազմարվեստի նրբությունների եւ ռազմավարության ու մարտավարության ամենախոր իմացությամբ։ Մարտի դաշտը հրաշալի պատկերացնող եւ սասունցի նախնիների կորովն իր [illegible] ունեցող Գրիգորը, որ Հայաստանից Արցախ մեկնած առաջին ջոկատի զինվորներից էր (1989 թ. ամառ), վերադարձավ եւ կամավորների նոր ջոկատ տարավ։ Արդեն՝ որպես հրամանատար։ Եւ մնաց հրամանատար։ Դեռ կգրվի ջոկատի բացակա անդամի՝ անմահացած Գառնիկ Ղուկասյանի մասին, որ հաղթանակով Շուշիից վերադառնալուց օրեր հետո՝ մայիսի 18-ին, զոհվեց հանուն այսօրվա խաղաղության, Երասխավանի մատույցներում։

Արդեն տնօրեն եղած ժամանակ էլ զինվորություն են արել եւ այսօր էլ պատրաստ են իրենց ջոկատով մեկնելու ցանկացած առաջադրանք կատարելու։

Պետությունը՝ եւ ազգը ամուր եւ ուժեղ են իրենց թիկունքին կանգնած այս տղաներով։ Ուժեղ պետություն կառուցելու, միշտ եւ ամեն ինչում հաղթող ազգ դառնալու նրանց նպատակով, նվիրումով եւ ոգով։

ԿԱՐԻՆԵ ԱՍԻՐՅԱՆ

Արդյոք կա՞ն մաքսային ծառայության գործող սկզբունքներ

Շուկայական հարաբերությունների անցման գործընթացը ուսումնասիրելու, առավելություններին ու անպատեհ կողմերին ծանոթանալու ամենահարմար «օբյեկտներից» մեկն է նաեւ մաքսային ծառայությունը: Մեր ժողովրդի մեջ գոյություն ունի մաքսավորի հավաքական մի կերպար կաշառակերի, կաշառասուի պաշտոնը չարաշահողի մտապատկեր, որն անշուշտ դժվար է կարճ ժամանակում փոխել: Իսկ թե ի՞նչ են անում իրենք մաքսավորներն այդ փոփոխությունները իրականացնելու գործում, մենք փորձեցինք պարզել: Ահա այն խնդրո առարկան, որը միշտ կարծես թե մնում է քողարկված: Որքան էլ որ օրենքները անկատար են, այնուամենայնիվ սա այն օղակն է, որ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել: Միգուցե ներսում կա՞ն խնդիրներ, որոնք ստեղծում են որոշակի իրավիճակ, որը դառնում է հետեւանք առիթ հանդիսանալով քաղաքացիների բազմաթիվ ասեկոսների, բողոքների...

Կա՞ն արդյոք օրենսդրական ակտեր, որոնք խանգարում են ծառայության գործունեությանը, կամ զգո՞ւմ է արդյոք մաքսավորը օրենսդրական համապատասխան դաշտի բացակայություն, եւ ընդհանրապես, ո՞րն են այսօր մաքսային ծառայության գործող սկզբունքները:

Այս եւ նմանօրինակ հարցերի լուսաբանման համար հանդիպեցի Արարատյան տարածաշրջանի մաքսատան պետի տեղակալ Ռազմիկ Դավթյանին, որը հակիրճ ներկայացրեց ծառայության իրավիճակը, նշելով, որ ծառայությունը, ի տարբերություն մյուս իրավապահ մարմինների, որոնք Հայաստանում ստեղծվել են կոմունիստների օրոք, նոր է սկզբնավորված, բայց ունի բոլոր անհրաժեշտ օրենսդրական ակտերը, որոնցով իրականացվում են մաքսային գործունեությունները: Ծառայությունը հիմնականում աշխատում է կառավարության որոշումներով, մաքսային օրենսգրքով, սակագների օրենքով եւ վարչության պետի հրահանգներով:

Սա խնդրի մի կողմն է, իսկ ինչպիսի՞ն է ուղեւորների վերաբերմունքը, քանզի նրանք են բողոքարկող մեծամասնությունը կազմում:

Մաքսային ծառայության աշխատանքներն առարկայական եւ հիմնավոր լուսաբանելու համար փորձեցի ներկա գտնվել «Զվարթնոց» օդանավակայանում թռիչքների մեկնմանը եւ ժամանմանը:

ՀՀ մաքսատան վարչության պետ Երջանիկ Աբգարյանի առանձնահատուկ թույլտվությամբ օդանավակայանում էի դա այն պահին, երբ ժամանել էր Դելիի չարտերային չվերթը: Առաջին իսկ պահից արժանացա «Զվարթնոց» օդանավակայանի մաքսատան ուղեւորային բաժնի պետի տեղակալ Ասմանազ Դավթյանի «բարեհամբույր» վերաբերմունքին: Պրն. Դավթյանը մաքսատան հնագույն աշխատակիցներից է, ունի աշխատանքային այսպես ասած «բազմահարուստ» փորձ, բայց չգիտես ինչու, չունեցավ պարկեշտ վերաբերմունք լրագրողի հանդեպ, արհամարհեց անգամ վարչության պետի մակագրած նամակը, նույնիսկ ավելին, փորձ արեց ձայնագրիչը ձեռքիցս վերցնել, արդարանալով՝ միգուցե ես գաղտնի ձայնագրում եմ: Այդպես էլ հանելուկ մնաց, ինչ ասել է գաղտնի ձայնագրություն, ինչեւէ, ստիպված եղա մեկ անգամ եւս հիշեցնել, որ այստեղ եմ գտնվում հատուկ թույլտվությամբ, հակառակ դեպքում բողոք կհայտնեմ վարչության պետին:

- Գնա՛ ո՛ւմ ուզում ես ասա՛, ինչ ուզում ես արա՛...

Ինձ ուրիշ ելք չէր մնում, խնդրեցի զանգահարել, որին պրն. Դավթյանը պատասխանեց.

- Մենք հեռախոս չունենք, գնա՛ որ տեղից ուզում ես զանգիր...

Ցավալի է, որ ընդունելությունը անցավ «բարձր մակարդակով», եւ եթե մաքսատան ուղեւորային բաժնի պետի տեղակալը իրեն թույլ է տալիս այդպես վարվել լրագրողի հետ, ապա պատկերացրեք ուղեւորների անպատկերելի վիճակը... Նման աշխատողը ի՞նչ օրինակ կարող է ծառայել իրեն ենթակա տեսուչներին:

Խոնարհ լրագրողիս պարտքը համարեցի բողոք հղել Երջանիկ Աբգարյանին, ինչպես նաեւ Արարատյան տարածաշրջանի մաքսատան պետ Սամվել Հակոբյանին: Իսկ հաջորդ օրը նորից շարունակեցի աշխատանքս եւ հանդիպեցի Արարատյան տարածաշրջանի մաքսատան պետի առաջին տեղակալ Գագիկ Նորեկյանին: Վերջինս, փառք Աստծո, բարեհամբույր գտնվեց, ինձ անձամբ ուղեկցեց օդանավակայան, ականատես եղա տեսուչների աշխատանքային առօրյային, ծանոթացրեց ուղեւորների հասանելիք կարգավիճակին, որոնք իրավունք ունեն իրենց հետ անցկացնելու 500 ամերիկյան դոլլար, իսկ ավել գումարի դեպքում պետք է ունենան բանկի համապատասխան թուղթ, թե որ բանկից են գնել այդ գումարը: Ուղեւորը հայտարարագիրը (դեկլարացիա) լրացնելուց հետո մտնում է մաքսային տարածք, որտեղ կատարվում է մաքսային ստուգում եւ ձեւակերպում: Մաքսային տեսուչը նախ պահանջում է հայտարարագիրը (դեկլարացիա) եւ պարտադիր կերպով բանավոր հարցումներ է տալիս ուղեւորին, թե նա արդյոք թմրանյութեր, զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր, չհայտարարագրված գումար, ոսկյա իրեր ունի՞, թե՞ ոչ: Այդ բոլոր հարցումներից հետո տեսուչը կնքում է հայտարարագիրը՝ համարելով իր մաքսային ձեւակերպումը վերջացած: Հետո պարզվում է, որ ուղեւորի մոտ կա որեւէ բան, որը նա չի հայտարարագրել կամ բանավոր հարցումների ժամանակ չի տեղեկացրել, դա արդեն համարվում է մաքսանենգություն, որի համար ձեռնարկվում են համապատասխան միջոցներ, կազմվում է մաքսանենգության ակտ եւ այն իրը կամ գումարը, որը ուղեւորը առանց հայտարարագրելու փորձում է անցկացնել մաքսային սահմանով, բռնագրավվում է հօգուտ պետության:



Գոյություն ունեն ՀՀ-ից արտահանման համար արգելվող ապրանքների որոշ տարատեսակներ՝

1) ամեն տեսակի զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր, ռազմական տեխնիկա եւ դրանց արտադրության համար համալրվող դետալներ, ռազմական հանդերձանք:

2) Թմրադեղեր, թմրանյութեր, հոգեկան խիստ ներգործություն ունեցող նյութեր, դեղեր, դեղամիջոցներ, բժշկական սարքավորումներ:

3) Անվավեր ճանաչված արժեթղթեր:

4) Ազգային հարստություն եւ պատմական ժառանգություն ներկայացնող արվեստի եւ հնության առարկաներ:

Մնացած բոլոր ապրանքատեսակները կարող են անցկացնել՝ մուծելով համապատասխան մաքսատուրք:

Օդանավակայանում կան տարբեր գերատեսչություններ եւ մեկը մյուսից անկախ ստեղծում են խոչընդոտներ, որի վերջնական տուժողները վերստին ուղեւորներն են: Ականատես եղա մեկ փաստի:

Նոյեմբերի 13-ին, Երեւան-Հալեպ թռիչքի ժամանակ ուղեւորուհի Մարիետա Թադեւոսյանը, անցնելով մաքսային ստուգումը եւ ձեւակերպումը, ըստ մաքսային օրենքի թիվ 224 որոշման, իր ոսկերչական իրերի համար մուծեց 80 դոլլար մաքսատուրք, եւ հանկարծ վիզաների եւ անձնագրային ծառայության աշխատողների կողմից պարզվեց, որ անձնագրում կնիքի հետ կապված խնդիր կա եւ նա իրավունք չունի մեկնելու: Քաղաքացին իրավացիորեն հետ էր պահանջում իրենից գանձված մաքսատուրքը: Կամ մեկ ուրիշ փաստ, ուղեւորի մաքսային ստուգումը, վիզաների եւ անձնագրերի ստուգումը անցնելուց հետո, պարզվում է, որ ավել քաշի համար պետք է գումար մուծի: Շատ ժամանակ արտասահման մեկնող ուղեւորները դրամ չեն ունենում, իսկ ՀՀ օրենքով դրամարկղ պետք է միայն հայկական դրամ մուծել, եւ ուղեւորը ստիպված հետ է վերադառնում, որ գնա տարադրամի փոխանակման կետ, այնտեղ իր տարադրամը փոխանակի հայկական դրամով, իսկ այս բոլորը խոչընդոտում է մաքսային ծառայությանը եւ դժվարացնում տեսուչի աշխատանքը:

Այս եւ նմանօրինակ իրավիճակը ստեղծում է արհեստական դժվարություն, այսինքն չկա մշակված որոշակի մեխանիզմ, որպեսզի մի գերատեսչությունը չխանգարի մյուսին եւ չառաջանա ներքին լարվածություն:

Իսկ ինչպե՞ս են մաքսատուրքերը գանձվում ուղեւորներից:

Եթե ուղեւորն իր հետ ունենում է հաշիվ-ապրանքագիր, որի մեջ նշված է ապրանքի արժեքը եւ հավաս է ներկայացնում մաքսային տեսուչին, ապա գումարը գանձվում է բերված ապրանքի արժեքի 10 տոկոսի չափով: Իսկ եթե հաշիվ չի ներկայացնում, ապա գումարը գանձվում է ապրանքի շուկայական գնի 10 տոկոսի չափով: Եթե ուղեւորն իր հետ բերում է 1000 դոլլարի արժողության տարբեր տեսակի ապրանքներ, ապա նրանից մաքսատուրք չի գանձվում: Հաճախ լինում են դեպքեր, որ ուղեւորը հրաժարվում է մուծել օրենքով սահմանված մաքսատուրքը, նման իրավիճակում նրա բեռը ի պահ է վերցվում մաքսավորի կողմից, եւ երբ ի վիճակի է լինում մուծել սահմանված գումարը, այնժամ էլ ստանում է իր բեռը:

Շուտով պատրաստվելու են տեղեկատու ցուցատախտակներ, որոնք փակցվելու են թռիչքի դահլիճում, ժամանման դահլիճում եւ պաշտոնական պատվիրակությունների սրահում, որպեսզի ուղեւորները նախօրոք ծանոթանան մաքսային օրենսգրքին, հայտարարագրերը լրացնելու օրինակներին, գանձվող մաքսատուրքերի դրույքաչափերին, որպեսզի ուղեւորն էլ իր հերթին դժվարություն չստեղծի տեսուչի համար:

Մաքսային վարչությունն իր աշխատակիցների համար պատվիրել է նոր համազգեստներ տարբերանշաններով: Սա եւս միջոց է, որով մաքսային ծառայության աշխատողները կտարբերվեն մյուս ծառայության աշխատողներից եւ բոլոր ծառայությունների հետ ունեցած անհարթությունները չեն կպչի մաքսային ծառայության հետ:

Մաքսատունը եւս ունի իր զանազան հիմնախնդիրները, որոնք քաղաքացիների բազմաթիվ դժգոհությունների տեղիք են տալիս:

Մաքսատունը չունի տեխնիկական հագեցվածություն, որը բավականին կհեշտացնի տեսուչների ամենա[illegible]կան պահանջմունքները: Ինչ խոսք, խնդիրը մեծ է, քանզի տեխնիկայի առկայության դեպքում հսկողությունը մաքսային առումով ավելի բարձր մակարդակի կհասնի, արագ կկատարվի ուղեւորների սպասարկումը, որը տեղիք չի տա ժամերով սպասեցնելուն: Ինչպես նաեւ, պետբյուջեի եկամուտների ավելացման հնարավորություններն ավելի մեծ կլինեն:

Մեր խմբագրությունն այսուհետ հաճախակի կանդրադառնա մաքսատանը վերաբերող խնդիրներին եւ միշտ ընթերցողների ուշադրությանը կներկայացնի այնտեղ կատարվող փոփոխությունները:

ԱՐԱՔՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հոգեւոր հացը կարող է անդառնալի կորուստներ բերել

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի «Գիտություն» հրատարակչությունն ակադեմիայի այն օղակներից է, որի կանոնավոր եւ ռիթմիկ գործունեությամբ պայմանավորված է համակարգի բոլոր ճյուղերի աշխատանքի արդյունավետության արժեւորումը, դրանց հրապարակայնությունը: Այն տարիներ շարունակ հայ ընթերցողին է ներկայացրել անգնահատելի արժեքներ, որ այցեսոմսեր կարող են համարվել հայ ժողովրդի համար լինեն դրանք հայագիտական, պատմական, թե գիտական այլ աշխատություններ: Հրատարակչության լույս ընծայած պարբերականներից «Պատմաբանասիրական հանդեսը», «Լրաբերը», բնական գիտությունների ոլորտն ընդգրկող «Աստղաֆիզիկա», «Ֆիզիկա», «Մեխանիկա» հանդեսները միշտ ունեցել են իրենց ընթերցողը եւ ըստ արժանվույն ներկայացրել հայ գիտնականների հետազոտությունների արգասիքը: Այսօր, սակայն, ավելի հազվադեպ կարելի է հանդիպել «Գիտություն» հրատարակչությունում տպագրված գրքերի: Այս մտահոգությամբ զրույցի հրավիրեցինք հրատարակության գլխավոր խմբագիր, փոխտնօրեն Սուրեն Ավետիսյանին:

– Ներկա «բարդ» ժամանակներում հրատարակչությունն ինչպե՞ս է գլուխ հանում «աղքատ շուկայից»:

– Այսօր ակադեմիական համակարգում, որքան էլ ցավալի է, ստեղծվել է մի անտրամաբանական իրավիճակ, երբ ակադեմիան ֆինանսավորում է գիտնականների աշխատանքը (ինչ չափով, դա հարցի այլ կողմն է), բայց չի ֆինանսավորում այդ աշխատանքի արդյունքի՝ գիտական աշխատությունների հրատարակությունը: Սա պատճառաբանվում է այն բանով, թե հրատարակությունը պետք է գոյատեւի իր հրատարակած գրքերի եկամուտների հաշվին: Այստեղ հաշվի չի առնվում ակադեմիական հրատարակությունների մի կարեւոր առանձնահատկություն. դրանք հիմնականում գիտական հետազոտություններ են նախատեսված ամենեւին էլ ոչ լայն ընթերցողի համար, տպագրվում են խիստ սահմանափակ տպաքանակներով, որոնց լիակատար սպառման դեպքում էլ անհնար է խոսել ինքնածախսածածկման, եւ առավել եւս, եկամտաբերության մասին:

Այս տարի մասնակի պետական ֆինանսավորմամբ հրատարակությունը տպագրել է 2 գիրք: Հրատարակված եւս 19 գիրք հովանավորության արդյունք են: Ժամանակ առ ժամանակ մեզ օգնում են նկարիչներ, Մանուկյան եւ Գյուլբենկյան հիմնադրամները, առանձին գործարար մարդիկ: Սովորաբար հովանավորվում են հասանելի մասշտաբի, հիմնականում պատմամշակութային, հայագիտական բնույթի գործեր: Այս տեսակետից տուժում են բնական գիտությունները, որովհետեւ այս բնագավառը հովանավորներին քիչ է հետաքրքրում:

Այսօր 280 չտպագրված աշխատություններ սպասում են իրենց «աստղային ժամին», հնանում են, կորցնում հրատապությունը: Երբեմն անգամ դիմել ենք կառավարություն, բացատրել, որ եթե միջոցներ են հատկացվում ակադեմիայի ինստիտուտների գիտական թեմաների համար, ապա պետք է ֆինանսավորվի նաեւ կատարված աշխատանքների հրատարակությունը:

– Ի՞նչ վիճակում է ակադեմիական պարբերականների տպագրությունը: Դրանք դեռ շարունակվո՞ւմ են:

– Այո, բարեբախտաբար, պարբերականների հրատարակությունը ինչ-որ չափով դեռ ֆինանսավորվում է: Ասում եմ ինչ-որ չափով, որովհետեւ եթե պարբերականների թիվը հիմնականում պահպանվել է (այսօր ընդհանուր առմամբ տպագրվում են 14 անուն ամսագրեր), ապա խիստ նվազել է դրանց հաճախականությունը: Եթե նախկինում հրատարակում էինք տարեկան 8, հետո 6, ավելի ուշ 4 անգամ համար, ապա այս տարի սահմանափակվում ենք 3 համարով (սա դեռ վատագույն դեպքը չէ, որովհետեւ անցյալ տարի, օրինակ, պարբերականների ֆինանսավորումն ընդհանրապես դադարեցվեց): Սահմանափակվել են տպաքանակները: Դժվար է լուծվում բաժանորդագրությունը: Ունեինք բաժանորդներ արտասահմանում, սակայն առայժմ գներն այսօր այնպիսի «բարձունքների» են հասել, որ [illegible] են դարձնում այն: Հավանաբար, ծանոթ եք «Աստղաֆիզիկա» հանդեսին, լուրջ, արժեքավոր գիտական աշխատություններ պարունակող ամսագիր է: Ամերիկայում բարձրմակարդակ տպագրվող նման մի համար հիանալի թղթի վրա, բարձր որակով, վաճառվում է 250 դոլլարով: Իսկ մենք, կենցաղային հոգսերով ծանրաբեռնված, այդքան չենք կարեւորում այդ բաները:

– Իսկ հրատարակչության տպարանների՞նը: Դժվար է ենթադրել, թե դրանք զերծ են մեր կյանքում «ամրագրված» դժվարություններից: Իմ տեղեկությունների համաձայն, Աշտարակի ձեր տպարանը չի գործում:

– Աշտարակի տպարանը գործում է: Պարզապես առաջիկայում այն կկանգնի կապված էլեկտրաէներգիայի սղության, ջեռուցման խնդիրների հետ: Տպարանը համեմատաբար բարվոք վիճակում է: Մեքենաները, սարքավորումները, որ ստացվել են Էջմիածնից, ավելի նոր են եւ ավելի բարձր հրատարակչական որակ են ապահովում (թեկուզ սա էլ հարաբերական է): Շատ ավելի ծանր է Երեւանյան տպարանի վիճակը: Մեքենաները, սարքավորումները անհուսալիորեն մաշված են եւ վաղուց չեն նորացվել: Ունենք 35 թ-ի արտադրության ֆիզիկապես եւ բարոյապես ծերացած մեքենաներ, որոնցից, իհարկե, որակ չես ակնկալի: Պահեստամասերի պետական մատակարարման բացակայության պայմաններում մեքենաների յուրաքանչյուր փոքրիկ մասի անսարքության դեպքում տպարանն օրերով կանգնում է: Ամեն ինչ ձեռք ենք բերում չարչիներից առասպելական գներով:

Մեր տպարանների բանվորներն ամենացածր վարձատրվողներն են: Որովհետեւ եթե այլ տպարաններ կարող են իրենց թույլ տալ տպագրել բուկլետներ, հրավիրատոմսեր, արագ սպառվող բովանդակային կամ [illegible] գրականություն եւ դրանով շտկել իրենց ֆինանսական վիճակը, ապա մեր կանոնադրությունը, ակադեմիական հրատարակչության պարտավորեցնող կոչումը մեզ թույլ չեն տալիս նման միջոցների դիմել: Այս պայմաններում, հասկանալի է, մասնագետները հեռանում են, ավելի լավ վարձատրվող աշխատանք գտնում: Զարմանալի չէ, որ մեր նախկին 90 աշխատակիցներից առայժմ «դիմանում են» 28-ը:

Ի պատիվ ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանի պետք է ասել, որ նա հնարավորության սահմաններում աշխատում է թեթեւացնել մեր հոգսերը: Օրինակ, լուծված է շուրջօրյա էլեկտրամատակարարման խնդիրը, երբեմն նյութական օգնություն է հատկացվում հրատարակչության աշխատողներին: Վերջերս արտասահմանից հաջողվեց օֆսեթ տպագրության մի մեքենա ձեռք բերել, որի գործարկումը բավական կլուծի մեր տպարանային ծախսերը, կբարելավի տպագրության որակը:

Բայց այդ ամենը քիչ է: Անշուշտ, բոլորս հասկանում ենք պետության հնարավորությունների սղությունը: Բայց կան բնագավառներ, որոնցում խնայողությունը կարող է կործանարար լինել մեր ժողովրդի համար: Որովհետեւ հոգեւոր հացը կարող է անդառնալի կորուստների առջեւ կանգնեցնել սերունդներին: Իսկ Գիտությունների ակադեմիան, կարծում եմ, նման դեպքում ավելի մեծ պետական հոգատարության եւ հովանավորության ակնկալելու իրավունք ունի:

[illegible]

ԳԵՐՄԱՆԻԱ

Հելմուտ Քոլ. «Խաղաղությունն անհատուցելի է»

1990 թ. հոկտեմբերի 3-ին գերմանական ժողովրդի կյանքում տեղի ունեցավ պատմական մեծ իրադարձություն. երկու Գերմանիաների միավորումը: Այդ առթիվ տպագրել էինք Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության արտաքին գործերի նախարար Կլաուս Քինկելի հոդվածը («Ազգ», 3 հոկտեմբեր):

Օրերս Հայաստանում ԳԴՀ դեսպանությունը «Ազգի» խմբագրությանը տրամադրեց Գերմանիայի կանցլեր դոկտոր Հելմուտ Քոլի 1995 թ. հոկտեմբերի 12-ին Բունդեսթագին հանձնած «Գերմանական միասնության 5 տարիները» հաշվետվության տեքստը, որում մասնավորապես ասված է.

Գերմանական հինգ մարզերի միավորումն ավելացրեց Գերմանիայի տարածքը: Կարեւոր է նաեւ այն, որ նախկին ԳԴՀ-ի բնակչության ճնշող մեծամասնությունը քաղաքականապես, տնտեսապես եւ հասարակական տեսակետից ցանկանում էր միավորվել ֆեդերատիվ հանրապետության հետ:

Փոփոխություններ ունեն ոչ միայն գերմանացիները: Դրանք կան նաեւ մեր երկրներում եւ մեր ժողովուրդների մոտ: Թույլ տվեք հիշեցնել ԽՍՀՄ-ի փլուզումը, պատերազմը նախկին Հարավսլավիայում, ազատագրական գործընթացները Մերձավոր Արեւելքում եւ Աֆրիկայում, ինչպես նաեւ Եվրամիության ստեղծումը եւ նրա միավորումը Մաաստրիխտի պայմանագրից հետո:

Այդ փոփոխություններից յուրաքանչյուրը նշանակալի է մեզ համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից 50 տարի հետո մենք գերմանացիներս, նորից զգացինք խաղաղ պայմաններում ապրելու ինքնորոշման ձեռք բերման երջանկությունը: Դրա համար շնորհակալ ենք ամբողջ աշխարհի մեր բարեկամներից եւ գործընկերներից: Ամենից առաջ նշում ենք Ջորջ Բուշի եւ Միխայիլ Գորբաչովի անունները, առանց որոնց Գերմանիայի միավորումը անհնար կլիներ:

Շնորհակալ ենք նաեւ բոլոր հարեւաններից: Դա վստահության արդյունք էր:

Անցած հինգ տարում մենք անցել ենք ներքին միավորմանը նպաստող հսկայական ճանապարհ: Այսօր նոր մարզերի բազմաթիվ գործարաններ աշխատում են ամենանոր սարքավորումներով, կգործարկվեն եւ կնորոգվեն հարյուրավոր կմ նոր երկաթգծեր, մայրուղիներ եւ ջրային ճանապարհներ...

Գործազրկությունը նոր նահանգներում դրված էր սոցիալիզմի պլանային տնտեսության հիմքում: Այդ ռեժիմի տակ ժողովուրդը շատ է տառապել: Այժմ նոր աշխատատեղերի ստեղծման միջոցառումների շնորհիվ սոցիալապես ապահովվեցին միլիոնավոր մարդիկ:

1991-94 թթ. սոցիալական ապահովության մարմինների կողմից Արեւմուտքից Արեւելք է ուղարկվել ավելի քան 240 մլրդ մարկ:

1990 թ. հուլիսի 30-ի դրությամբ թոշակառուների կենսաթոշակը կազմում է 600 մարկից ավելի:



Գերմանիայի վերամիավորումից հինգ տարի հետո նոր մարզերի առողջապահության մակարդակը հասել է Արեւմտյան Գերմանիայի առողջապահության բարձր մակարդակին:

Գերմանիայի երիտասարդությունն այսօր ստեղծել է ազատ եւ անկախ կյանքի հեռանկար: Երիտասարդության անձնական կյանքի պլանավորման համար Գերմանիայի միավորումը շատ մեծ նշանակություն ունեցավ հատկապես կրթության եւ դաստիարակության ասպարեզում:

Ինչպես եւ առաջ, նոր ֆեդերատիվ մարզերը ամենաարագացածն են Եվրոպայում: 1995թ. առաջին կիսամյակում համախառն արտադրանքի ցուցանիշը գերազանցեց անցյալ տարվա ցուցանիշը 7 տոկոսով: Վերջերս OECD-ն իր հաշվետվության մեջ նախազգուշացրեց, որ այսուհետեւ էլ այդպես պետք է լինի: Այս առաջընթացի հետեւում հին եւ նոր մարզերի ժողովուրդների համբերատար պայքարն է, վճռական, աշխատասեր եւ ապագայի նկատմամբ հավատով լի: Ով Գերմանիայի միավորմանը «այո» է ասել, չպետք է հրաժարվի դրանից: Սա է ապագայի մեր համընդհանուր ներդրումը:

Մեզ համար շատ մեծ նշանակություն ունի Գերմանիայի միավորումը խաղաղ պայմաններում: Խաղաղությունն անհատուցելի է:

Մենք գերմանացիներս, պետք է մեր անցյալը մի համընդհանուր ժառանգության մեջ ընդունենք, անկեղծորեն բացահայտելով Գերմանիայի ամբողջ պատմությունը: Նաեւ ճշմարտությամբ եւ բացատրությամբ համակրանք կգտնենք աշխարհում:

1990 թ. հոկտեմբերի 3-ից մեր ժողովրդի պատմության մեջ սկսվեց մի նոր եւ երջանիկ ժամանակաշրջան: Չնայած դրան, մենք դեռ շատ հոգսեր կունենանք, որովհետեւ Գերմանիայի միավորման հարցերը ամենակարեւորը չեն աշխարհում: Գերմանիան մեր հայրենիքն է, Եվրոպան՝ մեր ապագան: Մենք պետք է հրաժարվենք պատմությունից եւ մասնակցենք Եվրոպայի միավորմանը, դրա հետ մեկտեղ ապահովենք ժողովրդի բարեկեցությունը, սոցիալական ապահովությունը եւ ամենից առաջ ազատությունն ու անկախությունը ապագա սերնդի համար:

ԼԵՀԱՍՏԱՆ

Լեխ Վալենսա. Կվասնեւսկին հաղթել է կեղծիքի ու խաբեության միջոցով

Լեհաստանի նախագահական ընտրություններում պարտություն կրած Լեխ Վալենսան չի բացառում, որ պարտությունն իր համար անսպասելի էր: Բայց նա մտադիր չէ գործակցել նորընտիր նախագահի, ձախ ուժերի ներկայացուցիչ Ալեքսանդր Կվասնեւսկու հետ եւ խոստանում է նախահարված տալ: Նոյեմբերի 20-ի երեկոյան ընտրությունների ավարտից անմիջապես հետո Լեխ Վալենսան հայտարարեց, որ ինքը հավատում է իր գործի հաղթանակին:

Լեհաստանում չկա այնպիսի օրենք, որը 52-ամյա նախկին նախագահին կտրամադրեր կենսաթոշակ կամ պետական որեւէ այլ նպաստ: Բայց Վալենսան ունի անձնական միջոցներ: Միայն թե նա մտադիր չէ հեռուստացույցի առջեւ նստել, շախմատ խաղալ Գդանսկի իր տանը, ուստի մինչեւ օրս բնակվում է նրա ընտանիքը: Մի առիթով նա հայտարարել էր, թե միշտ էլ կկարողանա հիմնել սեփական բանկ, որին «վարկեր կտան ամբողջ աշխարհում»: Բայց դա ասվել էր ավելի շատ բանավեճի պահին եւ ոչ թե լուրջ դատողությամբ: Հավանական է այն, որ Վալենսան մոտ

Ալեքսանդր Կվասնեւսկի

ժամանակներս կմնա քաղաքականության դաշտում: Նա պատրաստ է իրականացնել իր վաղեմի մտադրությունը՝ գլխավորել ընտրություններում իրեն աջակցած ամբողջ ճամբարը եւ ստեղծել ժողովրդավարական ձախ ուժերի միության նման մի բան (այդպես է կոչվում նրա ախոյան Կվասնեւսկու բլոկը), միայն թե աջ կողմնորոշմամբ: «Համերաշխություն» արհմիությունն իր կողմից հայտարարում է, որ հարկավոր է լայն շարժում կազմակերպել այդ արհմիության առանցքի շուրջ:

«Ընտրությունները միշտ էլ մնում են, հայտարարեց նորընտիր նախագահ Ալեքսանդր Կվասնեւսկին ընտրությունների արդյունքների հրապարակումից անմիջապես հետո: Հատկապես ուզում եմ շնորհակալություն հայտնել Լեխ Վալենսային: Լեհաստանի պատմության մեջ նրա տեղը եւ վաստակն անվիճելի է: Կուզենայի, որ նա մոռանար վիրավորանքը եւ մեզ հետ գործակցեր հանուն Լեհաստանի»:

Սակայն Լեխ Վալենսան ասում է, թե մտադիր չէ գործակցել իր մրցակցի հետ, որն ընտրություններում «հաղթել է կեղծիքի ու խաբեության միջոցով»:

Նոր նախագահի պաշտոնավարության արարողությունը տեղի կունենա դեկտեմբերի 23-ին: Մինչ այդ պետության ղեկավարի պարտականությունները կշարունակի կատարել Լեխ Վալենսան:

«ԻԶՎԵՍՏԻԱ»

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Չիլլերը Լոնդոնում, Բայքալը Բոննում հաղթահարեցին Թուրքիայի դեմ եղած վերջին արգելքները

Եվրոպայի մաքսային ընդհանուր միությանը անդամագրվելու Թուրքիայի երկարամյա ջանքերը կարծես իրականանում են: Մաքսային միությունը, կամ ինչպես ասում են, Մաքսային պայմանագրին միանալը Թուրքիայի եւ հատկապես Չիլլերի կառավարության համար կենսական կարեւորագույն խնդիրներից մեկն է: Մաքսային պայմանագրին միանալով Թուրքիայում կլուծվեն մի շարք քաղաքական ու ֆինանսատնտեսական խնդիրներ: Թուրքիայի քաղաքական շրջանակներում համոզված են, որ Մաքսային պայմանագրին միանալուց հետո կիրականանա Թուրքիայի ամենաառաջնային ձգտումը՝ Եվրամիությանը անդամագրվելը: Ինչպես հայտնի է, Մաքսային պայմանագրին անդամագրվելու վերաբերյալ վերջին խոսքը պատկանում է Եվրախորհրդարանին, եւ այդ առումով Թուրքիայի կառավարության եւ մասնավորապես վարչապետ Թ. Չիլլերի վերջին 2 տարվա շփումները իզուր չեն անցնում:

Նոյեմբերի 22-ին Բրյուսելում Եվրախորհրդարանի 55 պատգամավորների մասնակցությամբ տեղի էր ունենալու ներկա նստաշրջանի նախագահ Սոլիանայի՝ Թուրքիայի վերաբերյալ պատրաստած զեկուցագրի քննարկումը: Այս կապակցությամբ անհրաժեշտ էր Եվրախորհրդի անդամ երկրների եւ հատկապես Եվրամիության անդամ պետությունների դրական վերաբերմունքը: Այս շրջանակներում նոյեմբերի 21-ի ուշ երեկոյան մեկօրյա աշխատանքային այցով վարչապետ Թ. Չիլլերը մեկնեց Անգլիա: Նոյեմբերի 22-ի առավոտյան տեղի ունեցավ Չիլլեր-Մեյջոր պաշտոնական հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին թուրք-անգլիական քաղաքական ու առեւտրատնտեսական հարաբերությունները, Մաքսային պայմանագրին Թուրքիայի միանալու, Եվրամիության հետ հարաբերությունների եւ միջազգային հետաքրքրություն ունեցող մի շարք հարցեր: Այնուհետեւ Չիլլերը հանդիպեց Անգլիայի գլխավոր ընդդիմադիր Բանվորական կուսակցության ղեկավար Թոնի Բլեյրին:

Հանդիպումներից հետո Չիլլերը մասնակցեց ընդլայնված մամլո ասուլիսին, ուր ներկա էին օտարերկրյա եւ թուրք բազմաթիվ լրագրողներ: Չիլլերը նախ հայտարարեց, որ «հանդիպումները շատ դրական էին»: Ապա դիմելով լրագրողներին՝ ասաց. «Թուրքիայում ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ մեծ ջանքեր են գործադրվում: Ժողովրդավարական սկզբունքների արմատավորման նպատակով շահագրգիռ բոլոր կազմակերպություններին եւ պատասխանատու անձանց հատուկ հանձնարարականներ են տրվել, փոփոխությունների է ենթարկվել Սահմանադրությունը: Երկրի համալսարաններին, սինդիկատներին ու կոոպերատիվներին նոր իրավունքներ են տրվել: Ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ 8-րդ հոդվածը փոփոխության ենթարկելու շնորհիվ բազմաթիվ բանտարկյալներ ազատ են արձակվել: Իսլամական 56 երկրների մեջ Թուրքիան միակ ազատական ու ժողովրդավարական երկիրն է, մի հանգամանք, որը հպարտությամբ է ընդունվում: Թուրքիան տարածաշրջանի երկրների համար այսօր համարվում է մոդել պետություն: Տարածաշրջանի իսլամական երկրները պետք է ընտրություն կատարեն՝ կամ ժողովրդավարական Թուրքիան, կամ արմատական Իրանը: Թուրքիան տարածաշրջանի համար համարվում է ժայռի նման ամուր երկիր: Թուրքիան բաժանում է Արեւմուտքի արժեքները եւ մինչեւ վերջերս այդ արժեքները պահպանելու ուղղությամբ հաջողությամբ պայքարում էր կոմունիզմի դեմ:

Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է: Արեւմուտքի մեր դաշնակիցներից ակնկալում ենք, որպեսզի վերջիններս, հաշվի առնելով Թուրքիայի ներկա իրավիճակը, ճիշտ ընտրություն կատարեն: Մեզ հուզող միակ հարցն այն է, թե Արեւմուտքը Թուրքիային կընդունի՞ իր կազմի մեջ, թե դուրս կվանի: Մենք գիտենք, որ Թուրքիան ու Եվրոպան անխզելի են, եւ հատկապես Թուրքիան Եվրոպայի համար անհրաժեշտություն է: Եվրոպայի հետ մեկ ամբողջություն կազմելու հարցում Թուրքիան վաղուց իր ընտրությունը կատարել է, եւ այժմ հերթը Եվրոպայինն է: Մաքսային միությանը Թուրքիայի անդամագրվելու վերաբերյալ վերջնական որոշումը պետք է կայացնի Եվրախորհրդարանը: Այն կլինի պատմական ընտրություն: Ընդունված որոշումից կախում ունի Թուրքիայում ժողովրդավարության ապագա ճակատագիրը: Այս առումով ինձ մեծ ոգեւորություն պատճառեց վարչապետ Մեյջորի աջակցությունը: Ճիշտ է, ես լավատես եմ, բայց դեռեւս հարցը լուծված համարել չի կարելի: Ամեն ինչ առջեւում է»:

Այնուհետեւ Չիլլերն ասաց, որ Մեյջորի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ Թուրքիայի դեմ սադրիչ հաղորդումներ հեռարձակելու MET-TV կայանի, Կիպրոսի եւ նավթամուղի խնդիրներ: Անդրադառնալով նավթամուղի հետ կապված հարցին նա ասաց. «Նավթամուղը երկու ուղղություններով տանելու հնարավորությունը Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ կամրապնդի համագործակցությունը: Այս հարցի նկատմամբ նման տեսակետ արտահայտեց նաեւ վարչապետ Մեյջորը»: Վերջում Չիլլերն ասաց, որ Մաքսային պայմանագրին Թուրքիայի անդամագրվելու հարցի նկատմամբ իր աջակցությունն է հայտնել նաեւ Անգլիայի Բանվորական կուսակցության ղեկավար Թոնի Բլեյրին:

Նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն արտգործնախարար, փոխվարչապետ Դենիզ Բայքալը նոյեմբերի 22-ին Բոննում մասնակցեց Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի եւ Թուրքիայի արտգործնախարարների «վեցի» հանդիպմանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Մաքսային պայմանագրին Թուրքիայի անդամագրվելու հետ կապված խնդիրները: Բացման խոսքով հանդես եկավ հանդիպման նախաձեռնող, Գերմանիայի արտգործնախարար Կլաուս Քինկելը՝ նշելով, որ Մաքսային միության անդամ Թուրքիան արժանի թեկնածու է եւ իր պաշտոնակիցներին Եվրախորհրդարանի անդամ պատգամավորների շրջանում Թուրքիայի օգտին քննարկելու կոչ արեց: Հանդիպման մասնակիցներն իրենց ելույթներում նշեցին, որ Եվրախորհրդարանում նոյեմբերի 22-ին կայանալիք քննարկությունը ինչ-ինչ պատճառներով բաղդատել դեկտեմբերի 24-ին Թուրքիայում կայանալիք Մեջլիսի ընտրությունների հետ եւ հետաձգել, սխալ կլիներ: Իսկ Իսպանիայի արտգործնախարար, Եվրախորհրդարանի ներկա նստաշրջանի նախագահ Սոլիանան ասաց, որ այդ հարցի վերաբերյալ նոյեմբերի 21-ին հանդիպում է ունեցել Եվրախորհրդարանի անդամների հետ եւ արտահայտել է իր դրական մոտեցումը:

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն՝ Բոննում Դենիզ Բայքալը առանձնազրույց է ունեցել Գերմանիայի արտգործնախարար Կլաուս Քինկելի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերությունների հետ կապված մի շարք խնդիրներ: Հանդիպումներն ավարտվելիս Բոննում տեղի ունեցավ համատեղ մամլո ասուլիս, ուր արտգործնախարարները պատասխանեցին լրագրողներին հետաքրքրող մի շարք բազմաբնույթ հարցերի: Շոշափվեցին Թուրքիայում մարդու իրավունքների, ահաբեկչության դեմ պայքարի, դեկտեմբերի 24-ին կայանալիք Մեջլիսի ընտրությունների եւ մի շարք այլ հարցեր: Բայքալը Բոննում առանձնազրույց ունեցավ Իտալիայի արտգործնախարարի հետ: Զրույցի ընթացքում Բայքալը նշեց, որ երկու երկրների միջեւ որեւէ հիմնահարց գոյություն չունի: Հանդիպումներն ավարտվելուց հետո Բայքալը TRT-ի թղթակցին ասաց. «Հանդիպման արդյունքները շատ գոհացուցիչ են: Եվրամիության անդամ երկրների ճնշող մեծամասնությունը Մաքսային միությանը Թուրքիայի անդամագրվելու հարցում արտահայտում է իր աջակցությունը»:

Այս ընթացքում հայտնի դարձավ, որ Եվրախորհրդարանի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 40 կողմ եւ 15 դեմ արդյունքով մերժեց Մաքսային միությանը միանալու Թուրքիայի վերաբերյալ զեկուցագրի քննարկումը հետաձգելու մասին առաջարկությունը: Դեկտեմբերի 11-ին կկայանա զեկուցագրի քննարկությունը, որից կախված է Մաքսային միությանը անդամագրվելու Թուրքիայի վաղեմի ձգտումը:

[illegible]

Մշակույթ

«Յուրաքանչյուր շողոքորթ ատում է նրան, ում ստիպված է շողոքորթել»

«Ռաֆայել Քոչարյանն այլեւս սպառված չէ՞», վերջերս հարցրեց ինձ մեկը, որ գրքից, բեմից, թատրոնից այնքան էլ հեռու չէ: Բեմում նրան քիչ են տեսնում, առավոտյան, ռադիոյի երգիծական մանրապատումներում նրա կենդանի ձայնը քիչ է լսվում: Պատճա՞ռը: Տարբեր կինոստուդիաների հետ պայմանագրեր ունի: Վերջին տարիներս հասցրել է նկարահանվել 8 տարբեր ֆիլմերում: Հիմա Երեւանում է: Նրա հետ զրույցն անսպառ կարող է երկարել: Հարցից հարց է ծագում: Իմ հարցերը հնարավորինս սեղմած ներկայացնում եմ մեր գլխավորապես կինոյի մասին զրույցը:

– Հարցազրույցներից մեկում այսպիսի միտք եք հայտնում. թատրոնի դերերն են, որ սնուցում են կինոյի իմ դերերը: Հիմա ամբողջովին նվիրված եք կինոյին. Ձեր դերերն անտերունչ չե՞ն մնացել:

– Ժամանակին թատրոնում սովորություն ունեին՝ տարվա մեջ գրանցվում էր, թե դերասանը որքան դեր է խաղացել: Թատրոնում գտնվելու օրվանից (70-ից) խաղացել եմ 5–6 դերասանի չափ: Հիմա երկարատեւ բացակայությունների արանքում, երբ ետ եմ գալիս, հայտնվում եմ սիրած ներկայացումներում խաղալ, եւ իմ յուրաքանչյուր կինոդեր սնվում է այն դերերից, որ ժամանակին խաղացել եմ թատրոնում: Այսօրվա կինոն ավելի շատ արտաքին է, քան ներքին: Ռեժիսորներին, պրոդյուսերներին, նաեւ դերասաններին առաջին հերթին հետաքրքրում է մասնակցության կարճատեւությունը, ստացած գումարը: Եվ երբ դերասանին առաջարկում են հրաշալի մի կերպար կերտել 2 օրում եւ ստանալ առավելագույնը 500-1500 դոլլար, դերասանը գերադասում է այդ 2 օրվա մասնակցությունը: Խոսքս «Տղամարդկանց բնավորությունները» ֆիլմի մասին է: Ի տարբերություն մյուս դերասանների, ես 2 օրվա նկարահանումների վրա աշխատեցի մոտավորապես 10 օր: Հպարտությամբ կարող եմ ասել, որ սցենարի հեղինակ Արմեն Վարդյանը (մեր հրաշալի երգիծաբաններից է, որ ցավում եմ, ռուսերեն է գրում) հիացմունքով ընդունեց այն բոլոր փոփոխությունները, որ կատարել էի, մեկին մեկ ավելացած տեքստ կար: Ֆիլմը ներկայացնում է կայուն բնավորություններին, տիպերին (շողոքորթ, ստախոս, շատախոս, ծծող, խանդոտ, կնամոլ) անտիկ աշխարհում, ապա մեր օրերին անդրադառնում: Անցյալի զգեստները փոխվում են, բայց մարդու էությունն այս 2–3 հազար տարվա մեջ չի փոխվում: Ինձ վստահված էր շողոքորթի դերը: Աշխատանքը, որ արեցի, այնքան հետաքրքիր էր, որ նկարահանող խումբը՝ օպերատոր, օգնականներ, ֆրեյմի մեջ ցնցում էին կինոխցիկը: Նախապես սցենարն իմանալով, նրանց համար անսպասելի էր այն, ինչ անում էի: Շատ եմ սիրում բառախաղը: Ֆիլմում էլ գործածում էի: Կերպարը բացահայտվեց առանց ռեժիսորի օգնության: Փորձ հասկացողություն չկար: Երբ նախնական տեքստին աշխատանք չունես, բեմում մտքի տեքստ կրկնես միայն: Շատ անգամ դերասանները տեքստն էլ չգիտեն, պատկերացրեք հուշարարի միջոցով են խաղում: Ցավում եմ, բայց 10 դերասանից 7–8-ն այդպես են աշխատում: Եվ պատկերացրեք տեքստին աշխատանքն անցած մի կերպար, եւ տպավորությունն այնպիսին է, թե մի 100 ներկայացում արդեն խաղացել եմ, հանդիսատեսի ռեֆլեքսը, ծիծաղը լսել, գիտեմ որտեղ դադար տամ, որտեղ շարունակեմ: Շողոքորթը գալիս է հարուստներից մեկին հյուր: Սեղանի շուրջ նստած են, հանկարծ ճչում է: Ըստ տեքստի, ճչալուց հետո տանտերը հարցնում է՝ ի՞նչ եղավ: Ասում է. «Ինձ շունը կծեց: Զարմանալի բան է, ինչպիսին տերն է, այնպիսին շունն է»: Ու հետո քթի տակ փնթփնթալով, որ շունն իրեն կծել է, գնում է: Տեքստում այսպես էր, որի վրա ավելացրի մոտավորապես այսպիսի տեքստ. ճչոց, հարցնում են՝ եղելը, ասում եմ՝ շուն (ես զարմացած ինձ եմ նայում), շուն կավելի է այնինչ յոթը շունը ինչ էր նայում ինձ կծել: Պատմում, հետո «զարմանալի բան է՝ ինչպիսին տերն է, այնպիսին շունն է»: Ռուսերեն տեքստում խոսքն ավելի է զարգանում: Դերի վրա աշխատելիս եկա այն եզրահանգման, որ յուրաքանչյուր շողոքորթ ատում է նրան, ում ինքը ստիպված է շողոքորթել: Ամբողջ իմ խաղը կառուցված էր հենց դրա վրա կծել, հետո հարցը: Եվ իմ Շողոքորթը կամաց-կամաց դառնում է Ատող: Իմ աշխատանքը մեծ խանդավառության առիթ տվեց՝ բոլորը ողջունեցին: Ինձ համար զարմանալի չէր: Անցյալ տարի նկարահանվեցի 25 սերիանոց «Ռոքսոլանա» ֆիլմում (ռեժիսոր Բ. Նեբիերիձե): Խաղում եմ Իբրահիմ փաշայի՝ գլխավոր վեզիրի դերը: Աշխատանքը մոտակա մեկ ամսում կցուցադրվի Կիեւում, իսկ տարվա վերջին կհայտնվի շատ ու շատ երկրների հեռուստաէկրաններին (ֆիլմը գնել են Մոսկվայի TV-6 ալիքը, Թուրքիան, Ղազախստանը, Կիրգիզիան, Ուկրաինան եւ այլն): Ինձ համար հետաքրքիր աշխատանք էր, առաջին անգամ կերպար ստեղծում էի երկար ճանապարհով (25 սերիայում էլ կա կամ): Հենց առաջին սերիայից դավաճանության ճանապարհին ընկած հերոսի ոգին կարողանալ արժանահավատ լինել, [illegible] այդ 25 սերիայում էլ կա: Ֆիլմը պայմանավորված էր նկարել մինչեւ 2000 թիվը, բայց 4–5 ամսում ֆիլմի 75 տոկոսը նկարեցինք: Ամենօրյա հսկայական աշխատանք դերի վրա:

Քոչարյանը Շողոքորթի դերում

Այս օրերին դպրոցներում երեխաների համար մանկական զվարճալի ներկայացումներ եմ խաղում: Հպարտությամբ եմ ասում դպրոցում դահլիճներ եմ տեսել միայն: Այնտեղ, որտեղ հնարավոր է տեղավորել 300-ին, գալիս են 500-ը: Ուրեմն Քոչարյան անունը երեխաների մեջ ինչ-որ բան արթնացնում է: Նկատելի է նաեւ մեծերի ուշադրությունը արվեստագետի հանդեպ: Ոստիկաններից մեկը խնդրեց համերգից հետո գոնե 5 րոպե հետս զրուցել: Արվեստը մեզ համար դարձել է հոբբի: Զբաղվում եմ մի բանով, որի համար փող չեմ ստանում: Անում եմ ներքին հաճույքի համար: Ճակատագրից շնորհակալ եմ, որ վերջին 4–5 տարին այդ հոբբին հաճույքով պահում եմ Հայաստանում, իսկ ընտանիքս ապահովում եմ Ռուսաստանի, Ուկրաինայի ստուդիաներում նկարահանվելու միջոցով: Այսօր հեռուստասերիալը բարձրացրել է դերասանի երկու անգամ ավելի շատ դիտելու ճանապարհի վրա, քան 3–4 ներկայացումներից կարող է ստանալ: Խոր ցավով եմ ասում այսպես կկորցնենք ամենաշնորհալիներին: Ի հայտ կգան արվեստագետների այն փոքր զանգվածը, որ փող ունի, իսկ հանդեսի մասին չի մտածում: Առաջ աշխատավարձովս երկու օրով գնում էի Մոսկվա, դիտում Մայքլ Ռեդգրեյվին, Լոուրենս Օլիվիեին եւ վերադառնում: Այսօր նման ուղեւորության համար դերասանը պետք է ծախսի իր 10 տարվա աշխատավարձը: Ո՞ր մի խնայողության կանի: Այսօր էլ ճամփորդության մեծ ծախսերի պատճառով նկարահանվելու քչերին են հրավիրում դրսից: «Կոմսուհի դը Մոնսոռո» ֆիլմում Ուկրաինայից Գուրգենյանն էր, Հայաստանից եւ ես: «Ռոքսոլանա» ֆիլմում միակ այլազգի դերասանը ես էի: Ո՞ր առավելության համար են ինձ հրավիրում: Երեւի որ ռեժիսոր Ռաֆայել Քոչարյանն աշխատելով դերասան Քոչարյանի հետ, պատրաստի տեսարան է բերում նկարահանման հրապարակ, նույնիսկ հուշում է խաղընկերների հետ տեսարանը բեմադրել, իսկ նկարահանման դահլիճ ռեժիսորը պատրաստի կեր է ստանում:

– Եվ չի՞ վիրավորվում:

– Բոլոր ռեժիսորներն ահավոր խանդոտ են այդ հարցում: Ես նրանց նախապես զգուշացնում եմ, թե այսպիսի տարբերակ ունեմ: Նկարահանման հրապարակում չեմ ուզում իմ եսը ցույց տալ: Եվ բոլորի մեջ այն տպավորությունն է ստեղծվում, թե ռեժիսորի հետ լուրջ աշխատել ենք: Կարող եմ խոստովանել, որ խաղացածս կերպարների ռեժիսորը ես եմ: Խաղընկերներիս հետ էլ ես եմ աշխատում եւ չեմ վախենում, որ տեսարանում դիմացինս ավելի հետաքրքիր լինի, քան ես: Արվեստում կարեւոր է համագործակցությունը: Կարեւորն այն է, որ հանդիսատեսը զգա դերն անցել է իր կրակի միջով: Ե՞րբ է կինոդերը կայանում: Նկարահանման ժամանակ մեծ հաճախ այնպիսի դրվագի, որ տպավորություն ստեղծվի, թե հանդիսատեսի առաջ մի 100 անգամ խաղացվել-ստուգվել է:

– Հնարավո՞ր է, որ դերասան Ռաֆայել Քոչարյանը գրավվի կինոռեժիսուրայով:

– Ժամանակին ցանկություն ունեի: Մտածում էի, որ հեռուստառեժիսորի մասնագիտություն ունեմ: Մոտակա 10-15 տարում անհնարին է: Շնորհալի ռեժիսորներ շատ կան, պրոֆեսիոնալների տեղը չեմ ուզում փակել: Սուրեն Բաբայանը իր 2 տարում նկարահանած «Բարաբան»-ը չի կարողանում ավարտել. միջոցներ չկան: Ուրիշ բան, երբ դրսից հնարավորություն ունենամ: Բայց դրսում էլ ազգային հարց կա: Հիմա իբրեւ դերասան այդ խտրականությունը չեմ տեսնում: Պատճառը երեւի այն է, որ խաղացածս ֆիլմերում ոչ մի տեղ հայի կերպար չեմ կերտել: Իսպանացու, անգլիացու, թուրքի. տարբեր կերպարներ մի տեղ բանդիտ գյուղացու, մի ուրիշ տեղ բոհեմական կերպար («Ուրախ ճամփորդություն» ֆիլմում), հետո լուրջ կերպար խանգի Իբրահիմ փաշայի եւ ինտելեկտուալ Ալֆրեդ Տորնը «[illegible]» ֆիլմում, դավաճանի կերպարը «Կոմսուհի դը Մոնսոռո» ֆիլմում: Տարբեր կերպարներ տարբեր ազգայնություններով: Անցյալ տարի Ղրիմի փառատոնում կարծիքներ լսեցի հանճարեղ դերասան, բայց մատնանշում դերերն անցյալի հետ են «Սասնայի ցրտաշնչի», «Լոսիի սեր», «Դաշտանկարի» Գուրգեն Գասպարյանի կերպարներից: Երեւի էլ ինձ համար բարձունքներ են: Դերասանի կյանքում լինում են նաեւ անկումներ: Ես չեմ վախենում ոչ անկումներից (կյանքում պարտք է), ոչ էլ բարձունքներից, գիտեմ՝ բարձունքից բարձր կա: Ուրեմն ձգտել էլ պետք է:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱԶԳԱԳԻՐ

Պարոնյան թատրոն

Այսօր հանդիսատեսը կարող է դիտել Արամաշոտ Պապայանի «Արեւը Ձեզ հետ» ներկայացումը: Սկիզբը՝ ժամը 16-ին: Կիրակի օրը թատրոնի բեմը կտրամադրվի «Սեր առաջին հայացքից» շոու ծրագրին: Սկիզբը՝ ժամը 16-ին:

Համազգայինի թատրոն

Այսօր, ժամը 16-ին, թատրոնը կներկայացնի Կլոդ Մանիեի «Օսկար» բեմադրությունը: Վաղը թատրոնի հյուրը կլինի փոքրիկ հանդիսատեսը, որի համար ժամը 13-ին կներկայացվի «Անբան Հուռին» երաժշտական բեմադրությունը:

Արամ Խաչատրյան մեծ համերգասրահ

Այսօրվա հոգեւոր ժամի նյութը՝ «Ներսես Շնորհալի»: Սկիզբը՝ ժամը 11-ին: Վաղվա համերգը նվիրվում է Ֆրանսիային: Ծրագրում՝ Ժ. Բիզե «Ռ. Շչեդրին», Մ. Ռավել «Գնչուհի» ռապսոդիա ջութակի եւ նվագախմբի համար: Մենակատար՝ Ռուբեն Ահարոնյան: Կ. Դեբյուսի «Փոքրիկ սյուիտ», Մ. Ռավել «Բոլերո»: Դիրիժոր՝ Միխայել Ավետիսյան: Համերգը հովանավորում է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը: Սկիզբը՝ ժամը 14-ին:

ԹԲԻԼԻՍԻ

Ադամյան թատրոնը կբացվի նոր պրեմիերայով

ԹԲԻԼԻՍԻ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ, ՄՆԱՐԲ: Ավելի քան 1.5 տարվա հարկադիր ընդմիջումից հետո Թբիլիսիի Պետրոս Ադամյան հայկական դրամատիկական թատրոնը նոյեմբերի 25-ին կրկին իր դռները կբացի Վրաստանի թատերասեր հասարակայնության առջեւ: Ինչպես հայտնի է, անցյալ տարվա մայիսին, թատրոնի շենքում տեղի էր ունեցել հրդեհ, որը տաղանդավոր ստեղծագործական կոլեկտիվի երկարատեւ պարապուրդի պատճառն էր դարձել:

Թատրոնի տնօրեն Կարոլ Մյասնիկովն ասաց, որ քանդված շենքի վերականգնմանը մեծ չափով օգնել է Վրաստանի կառավարությունը, հատկացնելով մի քանի տասնյակ հազար լարի, իսկ Հայաստանի ղեկավարությունը տրամադրել է անհրաժեշտ շինանյութեր: Կոլեկտիվին տեխնիկական ու ձայնային նոր սարքերով ապահովել է Հայաստանի ՆԳ նախարարությունը:

Ինչ վերաբերում է վերաբացման բուն իրադարձությանը, որին Վրաստանում առանձնահատուկ կարեւորություն է տրվում, այն կնշվի թատրոնի 130-ամյա պատմության մեջ առաջին անգամ «Սկանդալ Հավլաբարում» ներկայացման բեմադրությամբ, ըստ Ալեքսանդր Ցագարելիի «Խանումա» պիեսի:

Ակնկալվում է, որ պրեմիերային ներկա կլինեն Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն, Հայաստանի ներքգործնախարար Վանո Սիրադեղյանը, երկու հանրապետությունների պաշտոնական այլ անձինք:

ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ

«Ներսես Շնորհալի» երգչախումբը՝ համերգային նոր ծրագրով

«Խազեր» մշակութային հիմնադրամի «Ներսես Շնորհալի» երգչախումբը նոյեմբերի 25-ին հանդես կգա համերգային նոր ծրագրով: Երգչախմբի կատարմամբ կհնչեն հայ հոգեւոր, նաեւ նախաքրիստոնեական ու քրիստոնեական շրջանի ժողովրդական երգեր: Ըստ երգչախմբի ղեկավար Կարո Չալիկյանի, ծրագրում ընդգրկված ստեղծագործությունները՝ Հովհան Օձնեցու (7 րդ դ.), Սահակդուխտ Սյունեցու (8 րդ դ.), Գրիգոր Նարեկացու (10 րդ դ.), Ներսես Շնորհալու (12 րդ դ.) եւ միջնադարյան այլ երաժիշտների տաղերն ու շարականներն ամբողջական պատկերացում կարող են տալ հայ երաժշտարվեստի զարգացման հիմնական փուլերի մասին: Համերգային ծրագիրը կազմվել է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության պատվերով: Վերջինս երգչախմբին է փոխանցել 1 մլն դրամ:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 27-ին, ժամը 14:30-ին, Գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա բանաստեղծուհի Հռիփսիմե Հովհաննիսյանի «Աղոթքի ժամ» գրքի քննարկումը: Զեկուցող՝ Աբգար Ափինյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱՐԱՏ»
ավիաուղիներ

Պետական դուստր ձեռնարկությունը ՅԱԿ-40 ինքնաթիռներով կատարում է ուղեւորների եւ բեռների փոխադրում՝ բեռների փոխադրումը մատչելի գներով: Գործարար մարդկանց համար կան բիզնես կարգի սրահով կահավորված ինքնաթիռներ:

ԵՐԵՎԱՆ-ՍՏԱՎՐՈՊՈԼ
ԵՐԵՎԱՆ-ՆԱԼՉԻԿ-ՄԱՅԿՈՊ
ԵՐԵՎԱՆ-ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ
ԵՐԵՎԱՆ-ՎՈԼԳՈԳՐԱԴ
ԵՐԵՎԱՆ-ՍՈՉԻ
ԵՐԵՎԱՆ-ՄԻՆՎՈԴԻ
ԵՐԵՎԱՆ-ԹՈՒՐՔՄԵՆԲԱՇԻ
(ԿՐԱՍՆՈՎՈԴՍԿ)

Հանրապետության տարածքում ՄԻ-8 ուղղաթիռներով առաջարկվում են հետեւյալ ծառայությունները
- ուղեւորների եւ բեռների տեղափոխում
- բնակչության բժշկական սպասարկում
- գազատարների, բարձր լարման եւ կապի գծերի, գետերի, ջրանցքների եւ ավտոմայրուղիների պարեկային հսկողություն
- էքսկուրսիաների կազմակերպման աշխատանքներ:

Թռիչքները կատարվում են «Էրեբունի» օդանավակայանից:
Տեղեկությունների համար զանգահարել 48-03-51, 48-47-61

ԵՐԵՎԱՆ-ՄԻՆՎՈԴԻ բոլոր չվերթները «Զվարթնոց» օդանավակայանից տեղափոխվել են «Էրեբունի» օդանավակայան:

Մարզական

Ներկայացնում ենք ֆուտբոլային ակումբներին եւ նրանց խաղացողներին

Արսեն Ավետիսյան

Արսեն Ավետիսյանը «Փյունիկի» եւ ՀՀ ազգային հավաքականի հարձակվողներից մեկն է: Անհատական բարձր տեխնիկա ունեցող ֆուտբոլիստ է: Տիրապետում է բարձր արագության վրա խաբկերի: Արդյունավետ հարձակվող է: Հայաստանի Հանրապետության այն 3 ֆուտբոլիստներից մեկն է (Գեղամ Հովհաննիսյան, Վահե Յաղմուրյան, Արսեն Ավետիսյան), որ ՀՀ առաջնություններում, գավաթի խաղարկություններում եւ միջազգային պաշտոնական խաղերում անցել է 100 գնդակի սահմանը (102): Անցյալ տարի ՀՀ առաջնությունում խփելով 39 գնդակ ոչ միայն դարձել է գլխավոր ռմբարկու, այլեւ ռեկորդակիր:

Ծնվել է 1973 թ. հոկտեմբերի 8-ին Երեւանում: Հասակն է 167 սմ, քաշը 61 կգ: Առաջին մարզիչը եղել է Հարություն Քարաջյանը: ՀՀ առաջնություններում խփել է 95 գնդակ, գավաթի խաղարկություններում 6: ՀՀ ազգային հավաքականի առաջին գոլի հեղինակն է (Հայաստան-Մալթա 1-0): Հանրապետության գլխավոր թիմում անցկացրել է 11 խաղ, խփել 1 գնդակ: ՀՀ չեմպիոն է (1992 թ.), փոխչեմպիոն (1994 թ.): Արսեն Ավետիսյանն անցյալ տարի ճանաչվել է Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ:

– Ծնվել ես հայկական ֆուտբոլի համար հիշարժան տարում եւ ամսում: Միգուցե դա՞ էր պատճառը, որ ֆուտբոլիստ դարձար:

– Այո, իմ ծնվելուց երկու օր հետո «Արարատը» Մոսկվայում 2-1 հաշվով հաղթելով Կիեւի «Դինամոյին» առաջին անգամ դարձավ ԽՍՀՄ գավաթակիր, իսկ նոյեմբերի 28-ին Երեւանում 3-2 հաշվով առավելության հասնելով «Զենիթի» նկատմամբ, նվաճեց նաեւ ԽՍՀՄ չեմպիոնի կոչումը: Ինչպես հայրս է պատմում, այն ժամանակ ազգային խանդավառություն էր տիրում ու ինքն էլ էր ուրախացել եւ երազում էր, որ ես ֆուտբոլիստ դառնամ: Ասված օգնեց: Եղբայրս՝ Լեւոնը, որն ինձնից 12 տարով մեծ է, նույնպես ֆուտբոլ է պարապել եւ մարզվում էր Շենգավիթի մարզադպրոցում ու խաղում էր Լենինյան շրջանի հավաքականում: Ասում էր, «Ես պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ չդարձա, գոնե դու դարձիր»:

– Եւ ինչպե՞ս եղավ, որ ֆուտբոլիստ դարձար:

– 4-րդ դասարանում էի սովորում, երբ ընդունվեցի ֆուտբոլի հանրապետական մարզադպրոց: Դրանից հետո առանց ֆուտբոլի չեմ պատկերացնում:

– Հիշում եմ, 1991 թ., երբ ԽՍՀՄ բարձրագույն խմբի վերջին առաջնությունն էր անցկացվում, քեզ ընդգրկեցին հանրապետության գլխավոր թիմում «Արարատում»:

– Այո, նույնիսկ երկու հանդիպում անցկացրեցի «Արարատի» փոխարինողների կազմում («Արարատ»-«Դինամո» Մոսկվա, «Սպարտակ» Վլադիկավկազ-«Արարատ»):

– ԽՍՀՄ փլուզումից հետո եւ 1992 թ. ՀՀ անդրանիկ առաջնությունը սկսվելուց առաջ ինչպե՞ս եղավ, որ «Արարատի» պես հեղինակություն ունեցող թիմից տեղափոխվեցիր ՀՄԸՄ:

– Մինչ «Արարատում» խաղալս «Մալաթիայի» կազմում մասնակցում էի Հայաստանի առաջնությանը: Երբ լսեցի, որ Խորեն Հովհաննիսյանը նոր թիմ է կազմավորում «Մալաթիայի» իմ նախկին խաղընկերների՝ Վարազդատ Ավետիսյանի, Սուրեն Չախալյանի, Արմեն Գալստյանի եւ Արմեն Մարտիրոսյանի հետ որոշեցինք տեղափոխվել ՀՄԸՄ: Կիրովականի «Լոռուց» մեզ միացավ եւս մեկ խաղընկեր՝ Սարգիս Հովսեփյանը: Հիշյալ տղաների հետ վաղուց էինք միասին խաղում եւ մտածում էինք, որ համատեղ ավելի հեշտ կլինի հաջողության հասնել:

– Այս տարի ինչո՞ւ լավ չես խաղում:

– Երկար ժամանակ վնասվածքով էի խաղում: Երբ «Փյունիկը» Ձորաղբյուրում ուսումնամարզական հավաք էր անցկացնում, նախապատրաստվելով աշուն-գարուն սխեմայով ՀՀ առաջին առաջնությանը, ես հիվանդանոցում էի: Միայն երկու շաբաթ բուժվելուց հետո դուրս գրվեցի: Ռադիկուլիտ ունեմ: Փաստորեն չհասցրեցի ֆիզիկապես պատրաստվել: Մյուս տարի ես իմ խոսքը կասեմ:

– Իսկ հիմա հիվանդությունը չի՞ խանգարում:

– Ոչ, բուժվելուց առաջ խաղերի ժամանակ մեջքս ծակում էր: Հիմա, փառք Աստծո, այդպիսի բան չկա:

– Չե՞ս գտնում, որ փոքրամարմին լինելով՝ ավելի լավ է կիսապաշտպանությունում խաղալ: Եվրոպական բարձրակարգ թիմերի ավելի [illegible] պատրաստվածները խեղդում են ֆիզիկապես իրենց զիջողներին:

– Երբ ֆիզիկապես պատրաստ լինես, արագությունդ տեղը լինի, այդ փոքրամարմին լինելը չի խանգարի: Բացի այդ, մանկուց միշտ խաղացել եմ հարձակման գծում: Միաժամանակ նշեմ, որ հավաքականում միայն երկու անգամ եմ հարձակվողի պարտականություն կատարել: Խաղացել եմ աջ կիսապաշտպանի դերում:

– Ինձ թվում է, անհատական խաղը չարաշահում ես:

– Ինքս էլ լավ եմ հասկանում, որ ֆուտբոլը կոլեկտիվ խաղ է եւ չնայած անհատական խաղը չեմ սիրում, սակայն առանձին դեպքերում այն պետք է:

– Ինչո՞վ բացատրել, որ հավաքականում գոլ չես խփում:

– Յուրաքանչյուր մարդ սխալը իր մեջ պետք է փնտրի: Գտնում եմ, որ առաջին հերթին ես եմ մեղավոր: Ինքս շատ պետք է աշխատեմ, քանի որ մեծ ֆուտբոլ խաղալու համար շատ բան է պետք: Հավաքականի մակարդակով ֆիզիկապես մեր պատրաստվածությունը հիմնականում անբավարար է: Մրցակիցների պես պատրաստ չենք եւ միշտ զիջում ենք ֆիզիկականի պատճառով: Բացի այդ, պայմաններն այն չեն, փորձ չկա եւ օրը մեկ անգամ ենք մարզվում: Իսկ պրոֆեսիոնալը նա է, ով օրը երկու անգամ է մարզվում: Տակտիկապես էլ շատ ենք զիջում, որի պատճառով հավաքականը ձեռագիր չունի:

– Իսկ ո՞վ պետք է պատասխանի այդ հարցերին:

– Թող մարզիչները պատասխանեն: Վերջիվերջո հավաքականն ազգ է ներկայացնում եւ մենք պետք է հաղթել սովորենք:

– Հավաքականի կազմի մասին ի՞նչ կարող ես ասել:

– Ավելի լավ կազմ կարելի է ընտրել, սակայն կորիզը միշտ պետք է պահպանվի: Սարգիս Հովհաննիսյանի եւ Երվանդ Սուքիասյանի պես ֆուտբոլիստները պետք է միշտ մասնակցեն հավաքականի խաղերին:

– Կա՞ն հարձակվողներ, որոնց նախանձում ես:

– Իհարկե՝ Ստոյչկովին ու Ռոմարիոն, ֆուտբոլիստներ, որոնք հարձակվողին անհրաժեշտ ամեն ինչով օժտված են եւ ունեն գոլային նուրբ հոտառություն:

– Ո՞վ է հայկական ֆուտբոլում լավագույնը:

– Իմ տեսածներից կարող եմ նշել Խորեն Հովհաննիսյանին: Ներկա ֆուտբոլիստներից ինձ դուր են գալիս Սարգիս Հովսեփյանն ու Վարդան Խաչատրյանը:

– Մարզիչի դերի մասին ի՞նչ կարող ես ասել:

– Շատ մեծ է: Նա է որոշում ընդհանուր խաղաոճը: Թիմի տակտիկական դիմանկարը մարզիչից է կախված: Միայն ուժեղ մարզիչների թիմերն են հաջողության հասնում: Մեր հավաքականին մասնագետ մարզիչ է պետք:

– «Փյունիկը» կկարողանա՞ Եվրոպայում խաղալ:

– Անելով չէ, ժամանակը ցույց կտա: Մեր պաշտպանությունը լավն է, սակայն միջին օղակը պետք է ուժեղացվի:

– Խորեն Հովհաննիսյանի կողքին ինչպե՞ս ես զգում:

– Իր պես խաղացող այսօր հավաքականին շատ է պետք: Նրա փորձը հսկայական է: 1992-ին ինքը կար եւ մենք չեմպիոն դարձանք: Համոզված եմ, որ այս անգամ էլ կդառնանք, քանի որ լավ ենք պատրաստվել:

– Հայաստանի այս տարվա լավագույն ֆուտբոլիստն ո՞վ է:

– Միայն կարող եմ նշել Սարգիս Հովսեփյանի անունը:

– Իսկ Եվրոպայո՞ւմ:

– Իտալիայի «Յուվենտուս» թիմի 21-ամյա հարձակվող Դել Պիերոն:

– Ինչո՞ւ:

– Սարգիսը կարգապահ է, կայուն խաղ է ցուցադրում թե «Փյունիկում» եւ թե հավաքականում: Երբ նա կա, զգում ենք, որ թիկունքում ամեն ինչ ապահով է:

Դել Պիերոն երիտասարդ, տեխնիկապես զարգացած ֆուտբոլիստ է, խաղական տաղանդ: Նրա հայտնվելով Իտալիայի հավաքականում Ռոբերտո Բաջոյի բացակայությունը չի զգացվում:

– Կինդ ինչպե՞ս է վերաբերում ֆուտբոլին:

– Սկզբում չէր սիրում, հիմա նույնիսկ սկսել է խաղերը նայել: Հասկանում է, որ դա իմ մասնագիտությունն է:

– Ակումբի մասին ի՞նչ կասես:

– Ղեկավարներից շատ գոհ ենք: Իրենցից է, որ համերաշխ, մեկ ընտանիքի նման կոլեկտիվ ենք: Պետք է եւ չեմպիոն եւ գավաթակիր դառնանք:

– Սոցիալական վիճակդ ինչպիսի՞ն է:

– Քույրս եւ եղբայրս ամուսնացած են: Ես ապրում եմ ծնողներիս հետ, որոնք թոշակառու են: Փաստորեն ընտանիքը ես եմ պահում: Շատ չենք նեղվում:

– Մեր առաջնության խաղերում շատ ֆուտբոլիստներ իրար հայհոյում են, անպատվում:

– Մեր թիմում այդպիսի բաներ չեն լինում եւ չեն էլ կարող լինել: Թիմերի խաղամակարդակը մեծապես կախված է նաեւ կարգապահությունից: Օրինակ, «Սպարտակ»-«Բլեքբեռն» խաղի ժամանակ շատ տհաճ էր, երբ անգլիացի երկու ֆուտբոլիստներ իրար հետ կռվեցին:

– Ի՞նչ նպատակներ ունես:

– Մեծ ֆուտբոլ խաղալ, հանդես գալ եվրոպական ուժեղագույն ակումբներից որեւէ մեկում: Հույս ունեմ մյուս տարի կրկին դառնալ Հայաստանի Հանրապետության լավագույն ֆուտբոլիստ եւ առաջնության գլխավոր ռմբարկու:

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

ՀՀ պատանեկան հավաքականի դժգույն խաղը

Հոլանդիայում մեկնարկել է մինչեւ 18 տարեկան ֆուտբոլիստների Եվրոպայի առաջնության ընտրական փուլի խմբային մրցաշարը, որում ընդգրկված են Հոլանդիայի, Կիպրոսի եւ Հայաստանի հավաքականները: Առաջին տեղ գրավողը եզրափակիչի ուղեգիր ձեռք կբերի:

Առաջինն ասպարեզ դուրս եկան Հոլանդիայի եւ Կիպրոսի հավաքականները: Շատերին զարմանք պատճառեց կիպրոսցիների ակտիվ խաղը, որոնք հանդիպումը շահում էին 2-1 հաշվով, քանի որ հոլանդական ֆուտբոլային «դպրոցը» այսօր լավագույններից է ամբողջ Եվրոպայում եւ դրա վառ վկայությունն «Այաքսի» փայլուն հաջողություններն են Չեմպիոնների լիգայի մրցաշարերում, որի կազմում հանդես են գալիս հիմնականում տեղի կադրեր: Այնուամենայնիվ դաշտի տերերին հաջողվեց բեկում մտցնել խաղի մեջ եւ հաղթել 5-2 հաշվով: Երկու գոլի հեղինակ դարձավ «Այաքսի» խաղացող Դենիս Շույթը:

Երկրորդ տուրում ուժերը չափեցին Հայաստանի եւ Դանիայի հավաքականները: Ինչպես տեղեկացնում է ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Պավել Խաչատրյանը, մեր հավաքականը դժգույն խաղ ցուցադրեց եւ պարտվեց 0-1 հաշվով: Կիպրոսցիները վճռորոշ գնդակը խփեցին խաղավարտից 10 րոպե առաջ:

Այսօր Հոլանդիայի եւ Հայաստանի հավաքականների մրցավեճով կավարտվի մրցաշարը:

ՀԱՄԱՌՈՏ

Համատեղ մարզվեցին հայ եւ հույն ըմբիշները

Ծաղկաձորում ավարտվեց Հայաստանի եւ Հունաստանի հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի ազգային հավաքականների հավաքը: «Արմենպրեսի» թղթակցի հետ զրույցի ժամանակ մարզաձեւի՝ Հայաստանի պետական մարզիչ Էդուարդ Հարությունյանը եւ ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Արամ Սարգսյանն ասացին, որ նման համատեղ հավաքները ավանդական կդառնան, կօգնեն ինչպես հայ, այնպես էլ հույն ըմբիշներին պահպանել լավ մարզավիճակ: Հայ-հունական մարզական համագործակցության առաջին այս դրսեւորումը ոչ միայն կշարունակվի, այլեւ զարգացման նոր ձեւեր կգտնի:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ուկրաինայի ղեկավարությունը փորձում է օգնել Կիեւի «Դինամոյին»

Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչման Կոնչա-Զասպա հանրապետական մարզաբազայում հանդիպում է ունեցել եվրոպական ֆուտբոլային մրցումներից երեք տարով զրկված Կիեւի «Դինամոյի» մարզիկների եւ մարզիչների հետ: Լ. Կուչման ընդգծել է, որ երկրի ղեկավարությունը չի մոռանա թիմի մասին եւ հնարավոր ամեն ինչ կանի նրան աջակցելու համար: Մարզական լրագրողները հետաքրքրվել են, թե որեւէ միջոց ձեռնարկվու՞մ է թիմի որակազրկման ժամկետը կրճատելու համար: Ակումբի նախագահ Գրիգորի Սուրկիսը, որը մինչ այդ նման հայտարարություն էր արել, այս հարցին չի պատասխանել:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՐՍԱՆԻՔ

Եկեղեցական ամուսնություն 12 տարի անց

«Ֆորմուլա-1»-ի աշխարհի կրկնակի չեմպիոն Էմերսոն Ֆիտտիպալդին եւ նրա կողքին կանգնած տիկինը Թերեզա Քրիստինան, որոշեցին իրենց պաշտոնական (քաղաքացիական) ամուսնությունից 12 տարի անց պսակադրվել եկեղեցում: Հռոմում Պապի դիմաց եւ իրենց 11 տարեկան աղջկա ներկայությամբ նրանք նորից «այո» ասացին իրար:

Էմերսոն Ֆիտտիպալդին եւ նրա տիկին Թերեզա Քրիստինան չէի՞ն կարող արդյոք մի քանի տարի էլ սպասել եւ իրենց թոռնիկների հետ գալ եկեղեցի: Միգուցե այդ դեպքում Հռոմի Պապը գումարի շոշափելի զեղչ կատարեր: Բայց «Սիրողը չի հաշվում», ասում է առածը:

Գ. Ա.

Շնորհավորանքներ Համլետ Մխիթարյանին

Այսօր Հայաստանի ազգային հավաքականի եւ Երեւանի «Արարատի» կիսապաշտպան Համլետ Մխիթարյանի հարսանյաց հանդեսն է: «Ազգի» մարզասեր ընթերցողները եւ «Արարատ» ակումբն ի սրտե շնորհավորում են տաղանդավոր ֆուտբոլիստին եւ նրա ընտրյալին՝ Գոհարին, վերջապես իրենց նպատակին հասնելու համար, քանի որ երկուսն էլ շատ երկար եւ լուրջ փորձության ենթարկվեցին մեկ տարի մնալով նշանված: Երջանիկ եղեք:

ԿԱՆԱԴԱ

Վարչապետների խոստումներին միշտ չէ, որ պետք է հավատալ

Հոկտեմբերի 31-ին «Ազգը» հայտնել էր, որ ֆրանսախոս Քվեբեկ նահանգում տեղի ունեցած հանրաքվեից առաջ Կանադայի վարչապետ Ժան Կրետիենը Քվեբեկին խոստացել էր հատուկ կարգավիճակ տալ, երբ քվեբեկցիները դեմ քվեարկեն անկախությանը: Անկախականների առաջնորդ Լյուսիեն Բուշարն այն ժամանակ հիշեցրել էր, որ 15 տարի առաջ էլ, առաջին հանրաքվեի օրերին Քվեբեկին հատուկ կարգավիճակ էին խոստացել, սակայն ներկայիս վարչապետը մեկն է եղել նրանցից, որոնք թույլ չեն տվել, որ ճանաչվի նահանգի հատուկ կարգավիճակը: Ինչպես հիշում ենք, անկախության կողմնակիցները պարտվեցին ձայների չնչին տարբերությամբ: Հանրաքվեից ընդամենը 3 շաբաթ հետո Կանադայի վարչապետ Ժան Կրետիենը հրաժարվել է ֆրանսախոս նահանգին հատուկ կարգավիճակ տալու խոստումից:

Հանրաքվեից հետո առաջին 20 օրը հանգիստ է անցել, երբ չհաշվենք այն, որ դեռեւս անհայտ նպատակով, գիշերով Կանադայի վարչապետի նստավայր էր թափանցել դանակը ձեռքին մի մարդ, որի պատճառով Էլին եւ Ժան Կրետիեն ամուսինները մոտ 10 րոպե, մինչեւ ոստիկանների գալը, սարսափելի պահեր են ունեցել (տես «Ազգի» նոյեմբերի 9-ի համարը), եւ Քվեբեկի վարչապետ Ժակ Պարիզոն հրաժարական էր տվել: Կանադայի վարչապետն արտասահմանյան ուղեւորության էր մեկնել, իսկ Լյուսիեն Բուշարը Ֆլորիդա, հանգստանալու: Բուշարի՝ հանգստի գնալուց հետո ոչ ոք չգիտեր, թե ինչպիսին կլինի նրա քաղաքական ապագան, քանի որ անհաջող հանրաքվեից հետո նա չէր բացառում, որ կարող է քաղաքականությունից հեռանալ: Առավել եւս, որ ընտանիքում ոչ ոք նրան չէր սատարում: Նրա՝ Ամերիկայում ծնված եւ աճած ֆրանսուհի կինը քաղաքականությունից շատ հեռու կանգնած մարդ է, որին Քվեբեկի խնդիրները ամենեւին չեն հետաքրքրում, իսկ 2 երեխաները, Բուշարի ասելով, ուղղակի ատում են հանրաքվե բառը: Սակայն 3 օր առաջ Բուշարը վերադարձել է Ֆլորիդայից, եւ Կանադայի անգլիախոս նահանգները շատ վատ լուր են իմացել: Բուշարի կինը բարի է գտնվել եւ չի հակառակվել Ժակ Պարիզոյի փոխարեն Քվեբեկի վարչապետ դառնալու ամուսնու ցանկությանը: Որ Բուշարը կընտրվի վարչապետի պաշտոնում, ոչ ոք չի կասկածում: Իսկ դա ոչ միայն Բուշարի քաղաքականություն վերադարձն է, այլ նաեւ Կանադայի համար նոր հանրաքվե է նշանակում: Դիտորդների կարծիքով՝ այն տեղի կունենա առաջիկա 2 տարում: Բուշարը հայտարարել է, որ իր գլխավորած կառավարությունն ամեն ինչ կանի, որ Քվեբեկը անկախանա, եւ Օտտավայի հետ ոչ մի գործարքի չի գնա: Նա հայտարարել է. «Ես անկախական եմ»: Սակայն դա նրան չի խանգարել, որ Կանադա ժամանելու հենց հաջորդ օրը վարչապետ Կրետիենից պահանջի կատարել խոստացված սահմանադրական փոփոխությունները: Ի պատասխան դրան Կանադայի վարչապետն ասել է, որ ինքը ոչինչ էլ չի խոստացել եւ շտապել է. «Ես երբեք չեմ ասել, թե սահմանադրական փոփոխություններ են լինելու», եւ ճշտել է. «Խոսքը դաշնության մեջ փոփոխություններ կատարելու մասին է եղել, սահմանադրական փոփոխությունների, եթե անհրաժեշտ լինի»: Հանրաքվեում հաղթանակելուց հետո Ժան Կրետիենը Քվեբեկին հատուկ կարգավիճակ տալը այլեւս անհրաժեշտ չի համարում: Հանրաքվեից առաջ խոստում տալով Կանադայի վարչապետը դժվարին դրության մեջ է հայտնվել, քանի որ Կանադայի անգլիախոս վարչապետները դեպքերի այդպիսի զարգացմանը դեմ են եղել: Կանադական մամուլը հայտնում է, որ Ժան Կրետիենի վրա ազդել է նաեւ Կանադայի նախկին վարչապետ Պիեռ Տրյուդոյի կարծիքը, որը երկրի ապակենտրոնացման դեմ է հանդես գալիս: Այսպես, թե այնպես, դիտորդները կարծում են, որ Ժան Կրետիենը եւ նրա հետ միասին ողջ անգլիախոս Կանադան վտանգավոր քաղաքական խաղ են ձեռնարկել: Վարչապետի իր խոստումից այսօր ետ կանգնելը հետագայում անջատողականներին հնարավորություն կտա Օտտավային մեղադրել խոստումներ չկատարելու մեջ: Քվեբեկցիները, որոնք հավատալով, թե փոփոխություններ են լինելու, այս անգամ դեմ էին քվեարկել, հաջորդ հանրաքվեում արդեն Կանադայից անջատվելու օգտին կքվեարկեն:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

Բասաեւը սկսում է «ռադիոակտիվ պատերազմը» Ռուսաստանի դեմ

Բուդյոնովսկյան արյունալի դեպքերից հետո, որի զոհը դարձան տասնյակ անմեղ մարդիկ, թվում էր, թե Ռուսաստանի հատուկ ծառայությունները հրատապ միջոցներ կձեռնարկեն ծերբակալելու ու վնասազերծելու ահաբեկչական գործողության կազմակերպիչ ու ղեկավար Շամիլ Բասաեւին եւ նրա զինակիցներին: Սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց այս հարցում ՌԴ հատուկ ծառայությունների անկարողությունը: Շամիլ Բասաեւը իր խմբի հետ, առանց որեւիցե լուրջ խոչընդոտի հեռացավ հանցագործության վայրից, խոստանալով նոր գործողություններ ձեռնարկել Ռուսաստանի դեմ, եթե նա վերսկսի ռազմական գործողությունները Չեչնիայի տարածքում: Վերջերս զանգվածային լրատվական միջոցները նորից անդրադարձան Բասաեւին, նշելով նրա նոր սպառնալիքների մասին՝ «ավերակների վերածել Կրեմլը եւ ռադիոակտիվ պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ», որի համար, համաձայն Բասաեւի հավաստիացումների, արդեն Մոսկվա են հասցվել մեծ քանակությամբ ռադիոակտիվ նյութեր: Հրապարակումներին հետեւեց իրավապահ մարմինների ղեկավարների հերքումը, որոնք հավաստիացրին Ռուսաստանի հասարակությանը, որ ձեռնարկված միջոցների շնորհիվ բացառվում է այդպիսի գործողությունների իրագործումը ՌԴ տարածքում: Բայց, ինչպես հայտնի դարձավ երեկ, Բասաեւը ռուսական ՆՏՎ հեռուստատեսությանը հաղորդել է Իզմայլովյան պուրակում ռադիոակտիվ նյութով լի մի բեռնարկղի գտնվելու տեղը: Ժամը 15-ի սահմաններում ՆՏՎ-ի նկարահանող խումբը ժամանելով նշված վայրը հայտնաբերեց, ինչպես հետո պարզվեց, դեղին ծարով լի ռադիոակտիվ նյութ: Դեպքի վայր ժամանած անվտանգության ծառայության եւ արտակարգ իրադրությունների նախարարության մասնագետները չափեցին շրջակայքի ռադիոակտիվությունը, տեղում անցկացրին նյութի լաբորատոր հետազոտում, որից հետո այն հատուկ ավտոմեքենայով ուղարկվեց գիտահետազոտական ինստիտուտներից մեկը՝ հետագա հետազոտության: Դեպքից անմիջապես հետո քաղաքի տարբեր վայրերում տեղադրվեցին 46 ցուցիչներ, որոնց միջոցով ստուգվեց ռադիոակտիվ ֆոնը Մոսկվայում: Ինչպես հայտնեցին լրագրողներին արտակարգ իրադրության նախարարության աշխատակիցները, ռադիոակտիվ ֆոնի մակարդակը քաղաքում համապատասխանում է գոյություն ունեցող թույլատրելի նորմային: Միջադեպից հետո քաղաքի կենսական նշանակություն ունեցող հիմնարկ ձեռնարկություններում էլ ավելի խստացվեց հսկողությունը: Ձեռք են առնվում հրատապ միջոցներ թույլ չտալու նոր ահաբեկչական գործողություն, որի ժամանակ հնարավոր է ռադիոակտիվ նյութերի օգտագործում:

ԳԱԳԻԿ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

Մ. Նահանգներ. Հարկադիր պարապուրդն արժե 700 մլն դոլլար

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Բիլ Քլինթոնի վարչակազմը հանդես է եկել հայտարարությամբ, ուր նշվում է, որ միջկուսակցական պայքարի հետեւանքով 800 հազար պետական պաշտոնյաների մեկ շաբաթվա հարկադիր պարապուրդը կարժենա 700 մլն դոլլար եւ այդ գումարն ի վերջո գանձվելու է հարկատուների դրամապանակներից: Հիշեցնենք, որ ԱՄՆ-ի նախագահն ու Կոնգրեսը չկարողացան համաձայնության գալ 1996 թվականի ֆինանսական տարվա բյուջեի վերաբերյալ, ինչը պետական բոլոր հիմնարկների գործունեության ժամանակավոր դադարեցման պատճառ դարձավ: Հետագայում Սպիտակ տունն ու Կոնգրեսը համաձայնության եկան, ըստ որի բյուջեի վերաբերյալ վերջնական որոշումը պետք է կայացվի դեկտեմբերի կեսին:

Մոսկվան բավարարված է Դեյթոնով

ՄՈՍԿՎԱ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Ռուսաստանի փոխարտգործնախարար Իգոր Իվանովը նոյեմբերի 23-ին Մոսկվայում հայտարարեց, որ Ռուսաստանը բավարարված է Օհայո նահանգում ձեռք բերված պայմանավորվածությամբ: Սակայն Իվանովը նշել է, որ սա ընդամենը խաղաղության գործընթացի սկիզբն է, իսկ դժվարությունները առջեւում են, երբ կսկսվի պայմանագրի կետերի իրականացումը: Ռուս դիվանագետի կարծիքով, ամենաբարդ խնդիրներից մեկը շուրջ երկու միլիոն փախստականների վերադարձի հարցն է լինելու: Իգոր Իվանովը կրկին նշել է, որ Ռուսաստանը շարունակում է փայփայել Մոսկվայում Խորվաթիայի, Բոսնիայի եւ Սերբիայի նախագահների հանդիպում անցկացնելու հույսը: Հիշեցնենք, որ Բորիս Ելցինն այդ նախաձեռնությամբ հանդես եկավ, սակայն այն ձախողվեց Ռուսաստանի նախագահի հիվանդության պատճառով:

Նշանակվել է Իսրայելի արտաքին գործերի նոր նախարար

Իսրայելի արտաքին գործերի նոր նախարար Էհուդ Բարակը հայտարարել է, որ հրեական պետությանն անհրաժեշտ է չհանձնել Հորդանան գետի արեւմտյան ափի զգալի մասը: Երկրի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի պաշտոնում նշանակվելուց հետո իր առաջին հրապարակային ելույթում, հինգշաբթի երեկոյան Իսրայելի դիվանագիտության նոր ղեկավարն ընդգծել է. «Մենք ուզում ենք պահպանել մեր քաղաքացիական եւ ռազմական ներկայությունը Հորդանան գետի հովտում: Ինչ վերաբերում է Երուսաղեմին, ապա այն կմնա միասնական՝ մեր ինքնիշխանության ներքո: Մենք փոխզիջման ենք ձգտում պաղեստինցիների եւ սիրիացիների հետ, բայց այն ձեռք կբերվի միայն Իսրայելի համընդհանուր անվտանգության շահերի պահպանման պայմանով», ասել է Է. Բարակը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՐԿ
«Ազգը» աշխատանքի է հրավիրում
ՍՐԲԱԳՐՉԻ
Գերադասելի են նորավարտ բանասերները, ովքեր բնակվում են քաղաքի կենտրոնում կամ մետրոյի կայարանների մոտ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Վաճառում կամ փոխանակում եմ Ստեփանավանից մեկ կմ հեռավորության վրա գտնվող Կիրով բնակավայրում 2 սենյականոց սեփական տունս Երեւանում գտնվող բնակարանի հետ: Ունի ռուսական վառարան, նկուղ, 2 ցախանոց, գոմ, 1000 քմ տնամերձ այգի: Ինչպես նաեւ 1,4 հեկտար վարելահող (կարտոֆիլ, ցորեն): Զանգահարել 581841, 582483:

ԿՈՐԵԼ Է
ՍՅՈՒՆԻՔ ՍԱՖԱՐՅԱՆԻ
վարորդական գրքույկը: Գտնողին խնդրում ենք զանգահարել 630278, 582483 հեռախոսահամարներով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ

ՉՎԱՑՈՒՑԱԿ
1995 թվականի նոյեմբերի 1-ից սկսյալ
Զվարթնոց

Օրերը	Օդանավ	Մեկնում	ժաման.	Չվերթ	Նպատակակետը	Չվերթ	Մեկնում	ժաման.
- - - - -5- -	ՏՈՒ-134	12.00	13.00	R3 343	ԱԹԵՆՔ	R3 344	13.55	19.05
- 2 - - -6-	ՏՈՒ-154	06.15	08.00	R3 151	ԱՄՍՏԵՐԴԱՄ	R3 152	16.45	00.15*
1- - -5- -	ՏՈՒ-134	17.00	20.05	R3 7117	ԱՇԳԱԲԱԴ	R3 7118	21.10	22.30
-2- - - - -	ՏՈՒ-134	11.55	12.00	R3 345	ԲԵՅՐՈՒԹ	R3 346	14.00	17.55
- - - -5- -	ՏՈՒ-134	09.40	10.00	R3 401	ԲՈՒՐԳԱՍ	R3 402	12.00	16.20
- -3- - - -	ՏՈՒ-134	13.40	13.45	R3 811	ԴՈՆԵՑԿ	R3 812	16.15	19.10
- 2 - -5- -	ՏՈՒ-154	11.00	14.10	R3 311	ԴՈՒԲԱՅ	R3 312	21.00	00.10
-2- - - - -	ՏՈՒ-154	15.10	19.30	R3 7095	ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ	R3 7096	21.30	00.05*
- - - - - -7	ՏՈՒ-134	09.00	10.15	R3 301	ԹԵՀՐԱՆ	R3 302	11.45	14.10
- - - - - 6 -	ՏՈՒ-134	19.50	20.15	R3 815	ԽԱՐԿՈՎ	R3 816	22.15	02.25*
- - - - - - 7	ՏՈՒ-154	13.10	14.15	R3 7225	ՄԻՆՍԿ	R3 7226	16.15	21.05
1234567	ՏՈՒ-154	09.20	11.10	R3 910	ՄՈՍԿՎԱ	R3 909	12.40	16.25
-2- -567	ՏՈՒ-154	14.25	16.10	R3 894	ՄՈՍԿՎԱ	R3 893	17.45	21.10
- -3- -6 -	ՏՈՒ-154	11.10	19.45	R3 7091	ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿ	R3 7092	22.45	03.55*
-2-4-6-	ՏՈՒ-134	11.50	12.35	R3 7207	ՌՈՍՏՈՎ	R3 7208	15.00	17.45
1- - - - - -	ՏՈՒ-134	08.20	09 .00	R3 825	ՕԴԵՍԱ	R3 826	10.20	03.40*
- - - - -6-	ՏՈՒ-134	13.40	14.40	R3 835	ՍԻՄՖԵՐՈՊՈԼ	R3 836	16.15	19.10
1234567	ՏՈՒ-134	08.30	08.45	R3 7167	ՍՈՉԻ / ԱԴԼԵՐ	R3 7168	10.45	13.00
- - - - - - 7	ՏՈՒ-134	15.00	15.55	R3 7159	ՎՈԼԳՈԳՐԱԴ	R3 7160	17.30	20.20
- - -4- - -	ԻԼ-86	08.45	10.30	R3 101	ՓԱՐԻԶ	R3 102	20.10	03.40*

* ժամանումը/մեկնումը հաջորդ օրը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք «ԶՎԱՐԹՆՈՑ» օդանավակայան կամ ՀԱՈՒ-ի գործակալներին

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների *առաջարկի* եւ *պահանջարկի* մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռ»:

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1993 Տպաքանակը 7000 Ստորագրված է տպագրության 24. 11. 1995 Գինը՝ 50 դրամ